

# ՀՈՅ ԵՐԹԱՍ, ՀԱՅԱՍՏԱՆ...



Իշխանության գահին  
բազմած  
քաղաքական այրերը  
պարտավոր են  
գիտակցել, որ  
իրավունք չունեն,  
անհեռատես  
քաղաքականություն  
որդեգրելով,  
խաթարել  
մեր ազգի  
ներկան և ապագան...

## «Մենք շատ սեսնում ենք Հայաստանի մասնակցությունն իրարկում կուալիսիոն ուժերի շարժում»:

ԶՈՒ ՕՐԴՈՒԵՅ  
ՀՅ-ՌԱ ՍՄԽ ճախկին դեսպան

Եր Սահմանադրությունը «համապատասխանեցնում» ենք արդի աշխարհի «չափանիշներին» սեփական ձեռքով վտանգի տակ դնելով մեր ինքնուրույնությունը: Եվրոպայի ճնշմանը Եհովայի սուտ վկաների գործունեությունն օրինականացնում ենք մեր երկրում վտանգելով մեր ապագա սերնդի ազգային դիմագիծը: Պատրաստվում ենք զինուժ ուղարկել իրաք՝ հարցականի տակ դնելով հայ-արաբական հարաբերություններն ու իրաքահայ համայնքի Ֆիզիկական գոյությունը... Աշխարհի «նոր տիրակալներն» այդպես են ցանկանում: Իսկ թե ո՞վ ենք մենք և ո՞ւր ենք գնում, չի հետաքրքրում ոչ Ամերիկային, ոչ Եվրոպային, միայն թե իրենց կամքով ու ճշգրտած ուղով ընթանանք...

Ամերիկյան կուալիսիայի ուժերը «հակաահաբեկչական պայքարի» պատրվակով ահարեկում են մի ողջ ժողովրդի, «զանգվածային ոչնչացման գեներ» փնտրելու պատրվակով ջարդ կազմակերպում: Իսկ մենք (մեր ռազմավարական բարեկամներին հակառակ), խոսելով իրաք հայկական ստորաբաժանում ուղարկելու մասին, պատրաստվում ենք թեև բույլ, բայց և այս օրերին ԱՄՆ-ի համար կարևոր նշանակություն ունեցող մի քայլ անել, որը բացարձակապես չի համապատասխանում մեր ազգային շահերին:

Պարզից էլ պարզ է, որ ԱՄՆ, արդարացնելու համար իր ներխուժումը իրաք, ցանկանում է հնարավորինս շատ երկրներ ներգրավել կուալիսիայի կազմում, անգամ եթե դրանք փոքր լինեն, ինչպես ՀՅ-ն:

«Իրաքում տեղակայված բազմազգ ուժերը բավական դժվարություններ ունեն, և Հայաստանի աջակցությունն այս հարցում չափազանց գնահատելի է: Միջազգային հանրության (ինա՞ ԱՄՆ-ի - ինք.թ) ջանքերին Հայաստանի ներդրումը մենք շատ ենք կարևորում», - ասել է ՀՅ-ում ԱՄՆ դեսպան Զոն Էվանսը:

Իսկ մեր իշխանակորները թեև հավաստում են, որ «Հայաստանն առաջին օրվանից էլ ասել է, որ համաձայն չէ զինված ներկայություն ունենալ իրաքում», սա-

կայն միևնույն ժամանակ պնդում են «կուգենայինք մեր ներդրումն ունենալ հումանիտար ոլորտում»՝ առանց հաշվի առնելու այն կարևոր հանգամանքը, որ իր արժանապատվությունը խաթարված տեսնող որևէ ազգ չի կարող իր թշնանու շարքերը լրացնող ուժերի մեջ բարեկամներ փնտղել:

Յուրաքանչյուր պետություն, երբ որևէ երկրում իր քաղաքացիների նկատմամբ բացասական վերաբերմունք կամ տրամադրություն է նախազգում, նրանց շուտափույթ հեռացնում է այդ երկրից: Սակայն մեր պարագայում այլ է. մենք ունենք Սփյուռք, որին անտեսելու իրավունքը չունենք: Ուստի ՀՅ-ն պարտավոր է այս կամ այն երկիր զինուժ ուղարկելուց առաջ անպայման մտածել հայ համայնքների անվտանգության մասին, նամանավանդ եթե հարձակման ենթակա երկիրը չունի ազգընտիր պատասխանատու կառավարություն:

### Հետևողություն

ՀՅ իշխանությունները պարտավոր են որևէ որոշ ընդունելուց առաջ մտածել դրա հետևանքների մասին և ազգային շահերից բխող համապատասխան իրավական արգելակներ նախանշել՝ ապազգային գործունեությունները կանխելու կամ սանձելու համար:

Համահայկական նշանակություն կամ հետևանքներ ունեցող խնդիրներում, ինչպիսիք են՝ հողային պահանջատիրության հարցը և սփյուռքահայության անվտանգությունը, դիրքորոշում ընդունելու ժամանակ ՀՅ իշխանությունները պարտավոր են նկատի ունենալ հայոց ազգային ընդհանուր շահերը և ոչ թե մնալ ՀՅ ներ սահմաններում:

Իշխանության գահին բազմած քաղաքական այրերը պարտավոր են գիտակցել, որ իրավունք չունեն, անհեռատես քաղաքականություն որդեգրելով, խաթարել մեր ազգի ներկան և ապագան Հայաստանի Հանրապետությունում, Արցախում, Զավախսում և Սփյուռքում:

ԲՐՅՈՒՏԵԼՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԿ

# ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՍՏԳՈՒՄԱՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

ԵՎՐԱԽՈՐՃՐԱՐԱՆՈՒՄ ԲԱՑՎԵՑ  
«ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ  
ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ  
ԵՎ ՄԻԶԻՆ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ» ՑՈՒՑԱՅԱՆԴԵՍԸ

## ՄԱՍՈՒԼԻ ՀԱՌՈՐԴՎԳՐՈՒԹՅՈՒՆ

Բրյուսել, 03.10.2004

Սեպտեմբերի 25-26-ը Բրյուսելում տեղի ունեցավ Եվրոպայի հայկական հանագումարի տարեկան ընդհանուր ժողովը: Քննարկվեցին հայության հուզող բազմաթիվ հարցեր:

**Ժ**ողովը բացեց ԵՀՅ նախագահ Կարո Շակորյանը: Բարձր գալուստի և շնորհակալական խոսքերից հետո նա ներկայացրեց կազմակերպության տեսակետները ազգային հարցի վերաբերյալ՝ արդի փուլում:



**Ղ**նթերցվեց ՀՅ Աժ ղեկավարության՝ ժողովին հղած նամակը, որում նեծապես կարևոր վում էր «Եվրոպական հաստատություններին Հայության կովկասի տարածաշրջանի, մասնակի բառապես՝ Հայաստանի պատմությանը, մշակույթին, ինչպես նաև մշակույթի ոլորտում տարվող քաղաքականությանը ծանոթացնելու գործընթացը, առավել ևս այս ժամանակահատվածում, եթե Եվրոպական Միության (ԵՄ) հետ բացվելու են համագործակցության նոր հեռանկարներ...»:

Ընթերցվեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնից Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդի՝ ցուցահանդեսի կապակցությամբ հղած «գնահատանքի ու օրինության» խոսքը: Ողջունելով ժողովը Բենելուքս երկրներում ՀՅ արտակարգ և լիազոր դեսպան Վիգեն Չիթեյանը կարևորեց Սփյուռքի հայության դերն ու գործունեությունը՝ ի նպաստ հայության ու Հայաստանի Հանրապետության հզորացման: «Մարդու իրավունքներ՝ առանց սահմանի» կազմակերպության նախագահ Վիլլի Ֆորդերի ելույթը նվիրված էր Հայոց ցեղասպանությունը և ԵՄ-ին Թուրքիայի անդամակցությունը» թեմային: Նա նշեց, որ առանց Հայոց ցեղասպանության ճանաչման, առանց ազգային փոքրամասնությունների իրավունքները հարգելու և Կոպենհագենի չափանիշները ճանաչելու Թուրքիան չի կարող իր տեղն ունենալ Եվրոպական ընտանիքում:

**Ա**երկայացվեց ԵՄ-Թուրքիա անդամակցության վերաբերյալ մեմորանդումը (հուշագիր - Խնք.՝), որը պատրաստել էին Հայաստան-Եվրոպայի միությունը (Բեռն) և Ցեղասպանության դեմ և միջազգային ճանաչման աշխատանքային խումբը (Բեռլին): Փաստաթուղթն ստորագրել են մարդու իրավունքների, միջազգային, հայկական, հունական և ասորական ավելի քան 40 կազմակերպություններ:

Համայնքների ներկայացուցիչները ծանոթացրին իրենց համայնքներում կատարված աշխատանքներին: Հատկապես ուշագրավ էր Յուսսի Ֆլենինգ Բյորնի գեկույցը՝ Նորվեգիայի հայկական փոքրարիվ գաղթօջախում վերջերս ծավալված գործունեության մասին:

**Ա**շխատանքային օրվա ավարտին ցուցադրվեց Սերժ Տուսեփյանի «Լեռնային Ղարաբաղ. հայկական մշակութային հուշարձանները» կինոնկարը:

Սեպտեմբերի 26-ի նիստու սկսվեց վաղ առավոտյան: Առաջինը ելույթ ունեցավ Վազգեն Մանուկյանը (ՀՅ): Բազմաթիվ հարցեր ուղղվեցին բանասացին: Ժողովին նաև մասնակցում էր նաև «Հայերի համաշխարհային կոնգրես» կազմակերպությունը (ՀՀԿԿ) հանձին Անդրանիկ Միհրանյանի: Վերջինս ներկայացրեց ՀՀԿԿ ընդհանուր տեսակետներն ու նպատակները:

Օրվա երկրորդ կեսն ամբողջությամբ նվիրված էր կազմակերպչական ու ներքին հարցերին, հետագա ծրագրերի մշակմանը և աշխատանքների կողրդինացմանը:





Աղյանուր ժողովն իր քննարկումներն ավարտեց սեպտեմբերի 27-ին Եվրախորհրդարանի նիստերի դահլիճում տեղի ունեցած կոնֆերանսով: «Յարական և սովետական իշխանությունների ներքո Լեռնային Ղարաբաղի բնակչության տվյալները և ազգաբնակչության նկատմամբ կիրառվող քաղաքականությունը» թեմայով իր ելույթում շահեկան և նոր տվյալներ հրապարակեց գերմանացի պատմաբան Դանիել Մյուլերը: Բանասացը պատասխանեց բազմաթիվ հարցերի, այնուհետև անցան նաև «Լեռնային Ղարաբաղի խնդրի հնարավոր լուծումները» հիմնահարցի քննարկմանը:

Կոնֆերանսի ավարտին Մարգարիտ Ջախնազարյանը ներկայացրեց «Յայկական ճարտարապետական հուշարձանները Ղարավային Կովկասում և Սիսին Արևելքում» ցուցահանդեսի կազմակերպման ղժվարությունները՝ հատկապես Արևմտահայաստանում:

Նույն օրը երեկոյան Եվրախորհրդարանում բազմաթիվ հրավիրյաների, են պատգամավորների, Եվրահանձնաժողովի, դիվանագիտական անձնակազմի, Բելգիայի դաշնային և տեղական կառավարության անդամների, հանալսարանի դասախոսների և այլոց ներկայությամբ կատարվեց ցուցահանդեսի հանդիսավոր բացման արարողությունը:

Քացման խոսքում Յոնաս Շյուստենը ներկաներին ծանոթացրեց հայ ժողովով՝ որպես առաջին քրիստոնյա ազգի պատմությանը, ազգ, որ ստեղծել է հոյակապ մշակույթ և ճարտարապետություն, որի մի զգալի մասին այսօր էլ սպառնում է մշակութային ցեղասպանությունը, իսկ մշակութային այդ ժառանգությունը պատկանում է ոչ միայն հայությանը, այլ ողջ մարդկությանը:

Նա անդրադարձավ նաև Թուրքիայում ազգային փոքրանանությունների հրավունքների և ազատությունների ուժնահարմանը և հայտարեց, որ առանց այդ մարդկային իրավունքները հարգելու, առանց Ղայոց ցեղասպանության ճանաչման, առանց կատարելու առաջադրված նախապայմանները Թուրքիան չի կարող Եվրամիության նաև կազմել:

Research on Armenian Architecture կազմակերպության անունից ցուցահանդեսի նախապատճենությունը ներկայացրեց Զինորջի Բավայը՝ տեղեկացնելով՝ Իրանի Խաղաղական Ղանրապետությունում պետականութեն ինչպիսի հոգածությամբ են պահպանվում հայկական եկեղեցիներն ու ճարտարապետական կոթողները, իսկ Թուրքիայում և Ադրբեյջանում ոչչացվում և ավերվում է այն ամենը, ինչը հայկական է:

Ցուցահանդեսին մասնակցելու համար ներկաներին շնորհակալության խոսք ասաց ԵՀՀ նախագահ Կարո Ղակոբյանը:

Ցուցահանդեսը (սեպտեմբերի 27-ից հոկտեմբերի 1-ը) կազմակերպվել էր ԵՀՀ-ն՝ Եվրախորհրդարանի շվեյ պատգամավոր Յոնաս Շյուստենի հովանավորությամբ:

Ցուցահանդեսը պատրաստել էր Research on Armenian Architecture կազմակերպությունը:

# ԵՐՐ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

## ԲԱՑՄԱՆ ԽՈՍՔ

Այսօր աշխարհը փոթորիկների հորձանուտում է և կանգնած է մեծ փորձությունների առջև: Այդ խառնարանում են գտնվում նաև մեր հայրենիքը՝ Յայստանի Յանրապետությունը, նրա ժողովուրդը և ողջ սփյուռքահայությունը: Մեծ ու հզոր պետություններն ու ազգերը, իրենց հսկայական հնարավորությունները և ներուժը գործի դնելով, ձգտում են հաղթական ու առավելագույն շահով դուրս գալ այս պայքարից և, մեծ հավանականությամբ, այդպես էլ կլինի, իսկ փոքր ու սահմանափակ հնարավորություններ ունեցող երկրներն ու ազգերը, ինչպիսիք են ՀՀ-ն ու հայությունը, իրենց գոյությունը ապահովելու, իրենց շահերն ու իրավունքները պաշտպանելու և կամ ձեռք բերելու հանար առավել ճիգեր պիտի գործադրեն, առավել արթուն ու խելամիտ պիտի գտնվեն և առավել զոհողությունների պիտի գնան, որպեսզի չախչախվեն, ինչպես ինն լեզենդն է ասում, արիդայի ու *Սղիլլայի* արանքում:

**Այսօր հայ ժողովրդից,  
մանավանդ նրա ղեկավար  
մարմիններից ու  
կազմակերպություններից  
գերազույն ճիգեր են  
պահանջվում՝ խելամտորեն,  
ամեն ինչ մտածված, ազգային  
շահերն ամեն ինչից վեր  
դասելու գիտակցությամբ,  
անձնազոհության հասնող  
նվիրվածությամբ  
առաջնորդելու այս նավը:**

ՀՀ-ն այսօր կանգնած է ներքին ու արտաքին բազմաթիվ վտանգների ու խնդիրների առջև, Սփյուռքը դեռևս դեգերումների մեջ է, արտագաղթը ու տեղաշարժերը դեռ շարունակվում են, գոյության պայքար ենք մոլում, մեզ դեռ հուզում են հայապահպանության խնդիրները, ազգովի դեռ չենք հասել ապահով ու անվտանգ ապրելու և զարգանալու փուլին:

Այսօր առավել ևս վտանգավոր ու անկանխատեսելի իրականության առջև ենք կանգնած, անկանխատեսելի փորձությունների իրականության առջև՝ նոր մարտահրավերներ, ինն ու նոր չլուծված խնդիրներ, թշնամաբար տրամադրված ու նույնիսկ մեր գոյությունն անգամ չհանդուրժող ուժերով և հարկաներով շրջապատված...

Այսօր հայ ժողովրդից, մանավանդ նրա ղեկավար մարմիններից ու կազմակերպություններից գերազույն ճիգեր են պահանջվում՝ խելամտորեն, ամեն ինչ մտածված, ազգային շահերն ամեն ինչից վեր դասելու գիտակցությամբ, անձնազոհության հասնող նվիրվածությամբ առաջնորդելու այս նավը: Մեր ժողովուրդը պատմության ընթացքում, արհավիրներից ու հարվածներից կոփելով, ձեռք է բերել առանձնակի հատկություններ, ապրելու ու գոյատևելու ուրույն հատկանիշներ: Սակայն այսօրվա





բարդ աշխարհում հարկ է ծեռք բերել նաև այլ անհրաժեշտ հատկանիշներ, որոնք մեզ պակասում են, պիտի կարողանանք ավելացնել ուրիշ առաջադեմ ազգերի կյանքի դրական այն փորձը և ծեռքբերումները, որոնց պոտուղներն են քաղում այսօր հենց իրեն:

Մի քանի օր առաջ մենք տոնեցինք մեր պատմական հայրենիքի մի փոքրիկ մասում վերածնված Հայաստանի Հանրապետության անկախության տարեդարձը: Այդ անկախության արժանի ապագա գործունեություն ծավալելու գիտակցությունը պիտի սփռել հայության տարբեր հատվածների մեջ, հատկապես նրանց միջավայրում, ովքեր ինչ-ինչ պատճաներով այսօր անտարբերությամբ են վերաբերվում հայկական խնդիրներին:

Այսօր տեսնում ենք, թե ինչպես է հզորանում ու միավորվում Եվրոպան, ինչպես են երկրները մեկը մյուսի ետևից մաս կազմում Եվրոպական այս ընտանիքի, ինչպես է Թուրքիան Եվրոպայի դրույթունով բախում և օր առաջ Եվրամիության անդամ դաշնալու մարմածով աշխատում...

Այսօր ՀՀ-ը և Կովկասի մյուս հանրապետությունները ընդգրկվել են «Եվրոպա՝ նոր հարեանություն» ծրագրում: Ծավալվել է ուժեղ մրցակցություն այս հանրապետությունների միջև՝ ով է առավել արժանի Եվրոպական այս ընտանիքի մասը կազմելու համար: Այս մրցույթում մենք՝ հայերս, ունենք որոշակի առավելություններ: Դրանցից մեկը հայկական Սփյուռքն է, ավելի ճիշտ՝ Եվրոպայի հայությունը, բայց դա բավարար չի լինի, եթե ՀՀ-ում լրջությամբ չմոտենան այս հարցին, հապանցիկ ու մակերեսային նոտեցումներով ու քաղաքականությամբ բաց թողնեն հարմար արիթմերը, քանի որ ՀՀ-ի խաղաղ ու ապահով զարգանալու, ինչպես նաև ազատ, ժողովրդավարական հասարակարգ կառուցելու ուղին անցնում է Եվրոպայով: Մենք ոչ թե ձևականորեն, այլ խոր համոզունքով պիտի ընտրենք այս ուղին ու լինենք հետևողական: Հայությունը, այսպիսով, ոչ թե կրադարի հայ մնալուց, այլ կգոյատկի որպես կատարյալ ազգ՝ իր անկախությամբ, իր մշակույթով, իր ազգային հատկանիշներով: Տեղին է իիշել Ֆրանսիայի նախկին արտգործնախարարի խոսքը: Անգլիայում մի կարևոր դասախոսության ժամանակ, իր խոսքն ուղղելով անգլիացի լսարանին, ասել է՝ Եվրամիության մեջ ֆրանսիացիները միշտ էլ կմնան ֆրանսիացի, անգլիացիները՝ անգլիացի,

բայց մենք պիտի նաև աշխատենք, որ միասին լինենք նաև լավ Եվրոպացիներ: Նույնը կարելի է ասել նաև ամեն մի այլ Եվրոպական ընտանիքի նաև կազմող և նման ցանկություն ունեցող ազգի մասին:

**Մի քանի օր առաջ մենք տոնեցինք  
մեր պատմական հայրենիքի մի  
փոքրիկ մասում վերածնված  
Հայաստանի Հանրապետության  
անկախության տարեդարձը: Այդ  
անկախության արժանի ապագա  
գործունեություն ծավալելու  
գիտակցությունը պիտի սփռել  
հայության տարբեր հատվածների  
մեջ, հատկապես նրանց  
միջավայրում, ովքեր ինչ-ինչ  
պատճառներով այսօր  
անտարբերությամբ են  
վերաբերվում հայկական  
խնդիրներին:**

Եվրոպահայերի համագումարը, որպես հայկական բազմաթիվ կազմակերպություններից մեկը, հատկապես որպես համաեվրոպական կազմակերպություն, գիտակցում է այն հսկայական դերը, որ այսօր ունի կամ կարող է ունենալ Եվրոպայում գործող հայկական որևէ կազմակերպություն: Մեր համայնքներն ու կազմակերպությունները, իհնգ-վեց տարվա համատեղ փորձառությունից հետո, անցյալ տարի ԵՀՀ-ի ստեղծմամբ նոր թափով ու եռանդով լծվեցին աշխատանքի՝ Եվրոպական մայր ցամաքում գործելով՝ ի խնդիր Հայաստանի Հանրապետության հզորացման, Արցախի հիմնահարցի արդարացնելում, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և մեր ազգային ու մարդկային իրավունքների պաշտպանության հաստատականությամբ:

Այս կարծ ժամանակահատվածում մենք կարողացել ենք, մի շարք դժվարություններ հաղթահարելով, մեր ձայնը լսելի դարձնել միջազգային ատյաններում և արձանագրել որոշակի հաջողություններ:

Շնորհակալություն

(կրծատումներով)

# ԴԺՈՂՈՒ, ԴԱՏԱՊԱՐՏՈՒ ԵՆ

ՀՅ Իշխանությունների՝ Իրաք զինուժ ուղարկելու մտադրությունը հակագրեցությունների է արժանանում...

## ԻՐԱՔԱՐԱՅԵՐԻ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Իրաքահայերի բարեգործական մշակութային միությունն իր մտահոգությունն է հայտնում Իրաք 50 հոգուց բաղկարած խումբ ուղարկելու Հայաստանի իշխանությունների մտադրության կապակցությամբ եւ համարում է.

ա. Այս նախաձեռնությունը ուշացած է, նկատի ունենալով այն հանգամանքը, որ այսօր շատ երկրներ շահագրգուված են իրենց զորքերը դուրս բերելու Իրաքից:

բ. Զորախումբը ուղարկելու մտադրությունը կապող է խոչընդոտել վերջերս ՀՅ արտաքին գործերի նախարարի նախաձեռնությանը՝ Արաքական լիգայում հատուկ դիտորդի կարգավիճակ ունենալու հարցում, ի դեպ հայտնի է, որ Արաքական լիգան դեմ է արտահայտվել Իրաք զորք ուղարկելուն:

գ. Այս նախաձեռնությունը կվճասի Ղարաբաղի հարցում որոշ արաքական երկրների հայանապատ դիրքորոշմանը:

դ. Հայկական զորախումբի ներկայությունն իրաքում լրջորեն կվճասի արաքական աշխարհում բնակվող հայերի անվտանգությանն ընդհանրապես եւ իրաքահայերինը՝ նաև անավորապես:

ե. Մտահոգողն այս է, որ չեն բացառվում հայերի նկատմամբ ահաբեկումներ, առեւանգումներ եւ այլ անկանխատեսելի գործողություններ:

Ելնելով այս ամենից, ԻԲՍՍ-ն հույս է հայտնում, որ Հայաստանի իշխանությունները կվերանայեն Իրաք խումբ ուղարկելու իրենց մտադրությունը եւ կհաղթանակի բանականությունը:

ԻԲՍՍ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

## ՀՅ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՖՈՐՈՒՄԻ 8-ՐԴ ՀԱՎԱՔԻ ՈՒՂԵՐՁԸ ԱՐԱԲԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻՆ և ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

ՀՅ մտավորականների ֆորումի 8-րդ հավաքը, քննարկելով հակահրաքյան կուալիֆիոն ուժերին միանալու Հայաստանի Հանրապետության առանձին պաշտոնատար անձանց պատրաստակամությունը, նշում է՝

1. Հայ ժողովրդի մի ստվար զանգված տևական ժամանակ ապրում է Մերձավոր և Միջին Արևելքի երկրներում պահպանելով իր ազգային ինքնությունը և մշակույթը: Երախտապարտ հայ ժողովրդը երբեք չի նորանա, որ արաքական շատ երկրներ պետական նակարդակով ապահովել են տեղի հայ բնակչության չեզոքությունը՝ ներքին կամ միջազգային այս կամ այն խնդիրները լուծելիս և պետության հայագիտ քաղաքացիների լիիրավ իրավունքները:

2. Ստեղծված միջազգային բարդ իրավիճակում, երբ ՄԱԿ դեկավարությունն Իրաքի դեմ սանձազերծված պատերազմ համարում է միջազգային նորմերի կոպիտ խախտում, երբ կուալիֆիայի երկրներում առաջացել են հակապատերազմական տրամադրություններ, երբ աշխարհի շատ երկրներ կտրականապես պահանջում են դադարեցնել պատերազմը, ՀՅ-ի որոշ իշխանավորների այս նախաձեռնությունը այլ կերպ չի կարելի որակել, քան դավադրություն՝ մեր քաղաքակրությունների միջև ձևավորված արժեքների և դարավոր բարեկամության հանդեպ: Սա մի սադրանք է, որը կայացվել է հայ ժողովրդի թիկունքում և բացարձակ անհարիր է նրա եռթյանը:

ՀՅ մտավորականների ֆորումի 8-րդ հավաքը վստահեցնում է արաք ժողովրդին, որ հայ ժողովրդը միշտ էլ բարձր է գնահատել մեր դարավոր բարեկամությունը և այսուհետ և ամեն ինչ կանչ՝ պահպանելու և պաշտպանելու այն: Մեր բարեկամությունը շատ ավելի զորել է, քան այսօրինակ սադրանքի յուրաքանչյուր դրսւորում:

ՀՅ մտավորականները ուժի կիանեն ողջ ժողովրդին և թույլ չեն տա որևէ հայ զինվորի մուտքը Իրաք:

ՀՅ մտավորականների ֆորումի 8-րդ հավաքի նախագահություն՝

Օհան Դուրյան, դիրիժոր

Լենսեր Աղալովյան, ՀՅ ԳԱԱ ակադեմիկոս

Սարգսի Մուրադյան, նկարիչ, ակադեմիկոս

Էդուարդ Սիմոնյանց, գեներալ-մայոր

Ղմիտրի Ատրաշյան, ավիացիայի գեներալ

Սիլվա Կապուտիկյան, բանաստեղծուիի

Խորեն Պալյան, աստվածաբան

Դավիթ Սենյակյան, ՀՅ ԳԱԱ ակադեմիկոս

Ռաֆայել Ղազարյան, ՀՅ ԳԱԱ ակադեմիկոս

Աննա Բոյաջյան, դրկտոր, պրոֆեսոր

Երվանդ Մանարյան, դերասան

22. 10. 2004թ., ք. Երևան

# ԱՄՐԱՊՆԴՎՈՒՄ ԵՆ

## ԹԵՇՐԱՄ - ԵՐԵՎԱՆ ԿԱՂԵՐԸ

Եպտեմբերի 8-9-ը ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի հրավերով Երևանում էր Իրանի Խւլամական Հանրապետության (ԻԻՀ) նախագահ Մոհամեդ Խաթամին: Սա նրա առաջին պաշտոնական այցն էր ՀՀ: Խաթամի-Քոչարյան հանդիպման ժամանակ կողմերը քննարկել են Երևանում փոխհարաբերությունների զարգացման, տարածաշրջանային և միջազգային հարցեր: Նախագահներն ստորագրել են «Հայաստանի Հանրապետության և Իրանի Խւլամական Հանրապետության միջև համագործակցության սկզբունքների և հիմունքների մասին» պայմանագիր, իսկ համապատասխան պաշտոնատար անձինք վավերացրել են յոթ համաձայնագիր՝ տնտեսության ու մշակույթի ոլորտների վերաբերյալ:

Ինչպես նշվում է այցի առթիվ հրապարակված համատեղ հայտարարության մեջ, ՀՀ նախագահն այցը գնահատել է իրեն «Երևանում համագործակցության ընդլայնման նոր փուլ», իսկ հայքաղական գործիչներից շատերն այն համարել են պատմական: Խոսելով հայ-իրանական փոխհարաբերությունների մասին՝ հարկ է նշել, որ եթե 1998-99թթ. դրանցում նշանառելի էր հետընթացը, ապա 2000 թվականից ի վեր Երևան-Թեհրան կապերը տարբեր, մասնավորապես տնտեսության ոլորտում, նկատելիորեն աշխուժացել են և ընթանում են երեք հիմնական ուղղություններով՝

ա) արտադրական համատեղ նախագծերի հրականացում. դեռևս 2001թ. կողմերը հայտարարեցին, թե բանակցում են 400 միլիոն դոլար ընդհանուր արժողությամբ 10 նախագծի շուրջ,

բ) առևտորական կապերի ընդլայնում,

գ) երկու երկրների առանձին մարզերի միջև (իրանական օստան) տնտեսական համագործակցություն:

2001թ. դեկտեմբերի 25-27-ը ԻԻՀ պաշտոնական այցի ընթացքում Ռ. Քոչարյանն իր պաշտոնակցի և բարձրաստիճան այլ անձանց հետ քննարկել էր միջազգային, տարածաշրջանային և Երևանում փոխհարաբերությունների հարցեր: Երկու երկրների փոխհարաբերությունների առումով դիվանագիտական շրջանակներն այցը գնահատեցին իրեն շրջադարձային: Դա նշանակում է



թեհրան-Երևան կապերը տարբեր ոլորտներում 2002 թվականից զարգանալու են ավելի բարձր տեմպերով: Թեհրանյան բանակցություններում, ըստ միջազգային ՁԼՄ-ների հաղորդագրությունների, կարևորվել էր Իրան-Հայաստան գազատարի կառուցման խնդիրը, ինչը վերջիններիս հավաստմանք ծգծրգում է լոկ այն պատճառով, որ դրան դեմ էր Ռուսաստանի Դաշնությունը (ՌԴ): Թեև բացառված է, որ ռուսական, ինչպես նաև ամերիկյան գործոնն արգելակող դեր ունենար վերոնշյալ գազատարի նախագիր իրականացման առնչությամբ. ընդհանրապես Միջին Ասիայի և Անդրկովկասի Էներգակիրների արտահանման և այդ նպատակով խողովակաշարերի կառուցման խնդիրն ակնհայտորեն իր վրա քաղաքական կնիք է կրում: Այսուհանդերձ, այստեղ թերևս մեծ նշանակություն ուներ կողմերի ոչ վճռական տրամադրվածությունը: Դրա վառ օրինակը Իրան-Թուրքիա խողովակաշարի գործարկումն է, որը տեղի ունեցավ լոկ այն բանից հետո, եթե Թեհրանն ի վերջո վճռականություն դրսելուց: Մինչդեռ Վաշինգտոնը լուրջ ճնշումներ էր գործադրում Անկարայի վրա՝ պահանջելով հրաժարվել այդ պայմանագրից: Բացի այդ, ԻԻՀ-ն խնդրու առարկա գազանուղի գործարկմանք դառնում էր ՌԴ մրցակիցը, որն ապահովում է Թուրքիայի գագի պահանջարկի 70 տոկոսը, հետևաբար դա ցանկալի չէր լինի նաև ՌԴ-ի համար: Այդ հարցում Թեհրանի վճռականությունը, քաղաքական նկատառումներից զատ, թերևս պետք է պատճառաբանել նաև այն բանով, որ այդ նախագիծը տնտեսական տեսանկյունից խոշոր և կարևոր գործարք էր, բացի այդ, ԻԻՀ գագը Եվրոպա արտահանելու առումով առավել նպատակահարմար տարրերակ:

Իրան-Հայաստան գազատարի կառուցման դեպքում, Թեհրանի տնտեսական շահն անհամեմատ փոքր է, ուստի ԻԻՀ-ն, ՌԴ-ին դեմ չգնալու նպատակով, կարող էր հրաժարվել դրանից, վճռականություն դրսելու, քանզի վերջինիս հետ բնականոն փոխհարաբերությունները խիստ կարևոր են ԻԻՀ-ի համար: Մյուս կողմից՝ ՀՀ-ում էներգետիկայի ոլորտում մենաշնորհային դիրք ունեցող ՌԴ-ն, որ միաժամանակ նաև ՀՀ-ի ռազմավարական

գործընկերն է տարածաշրջանում, թերևս չեր ցանկանում կորցընել այդ արտոնությունը և արգելակում էր նախագծի հրագործմանը: Ասի թե ինչու 1992 թվականից՝ գազատարի կառուցման վերաբերյալ կողմերի միջև համաձայնագրի կնքը վելուց ի վեր, այդ հարցը դարձել է հայ-իրանական գրեթե բոլոր բանակցությունների օրակարգի անբաժան մասը: Բացառություն չեն նաև Քոչարյան-Խարամի երևանյան բանակցությունները:

Ինչպես նշվում է նաև համատեղ հայտարարության մեջ՝ երևանյան բանակցություններում խիստ կարևորվել է իրան-Հայաստան գազատարի կառուցման, Քաջարանի թունելի և Արաքսի վրա ՅԵԿ կառուցելու նախագծերի իրականացումը: Այլ կերպ ասած՝ կողմերը կարևորել են համագործակցությունն ենթագետիկայի, տրանսպորտի և հաղորդակցման ոլորտներում: Յավելենք, որ Երևանում ստորագրված համաձայնագրերից մեկը վերաբերում է գազատարի Մեղրի-Քաջարան հատվածի ֆինանսավորմանը, որն ստանձնել է իրանական կողմն: Սա այն դեպքում, եթե բվում էր, թե կողմերի միջև ընթացիկ տարվա բանակցությունների արդյունքում հարցը վերջնականացես լուծվել է, և 2007 թվականից իրանական գազը ներհոսելու է ՀՀ: Գազատարի կառուցման նախագծի իրականացմանն, անշուշտ, նպաստել է ռուս-Վրացական փոխհարաբերություններում վերջին մեկ-երկու տարվա լարվածությունը, որն ի սկզբանե կանխատեսելի էր: Ուստի, եթե Մոսկվան իր անդրկովկասյան քաղաքականության մեջ հեռատես լիներ, այսօր արդեն իրան-Հայաստան գազատարն իրողություն կլիներ, որի կարևոր նշանակությունը, ներկա դրությամբ, ՌԴ-ի համար չի կարելի թերագնահատել: Նշենք նաև, որ ընդհանրապես հայ-իրանական համատեղ խոշոր այլ ծրագրեր կյանքի կոչելու առնչությամբ գործնական լուրջ քայլեր առ այսօր չեն արձանագրվել, թեև որոշ դրական տեղաշարժեր նկատելի են:

Ինչպես նշվեց՝ Խարամի-Քոչարյան բանակցություններում կարևորվել են նաև տարածաշրջանային հարցերը, մասնավորապես՝ Ղարաբաղի հիմնախմբիրը: Այս առնությամբ հայաստանյան ԶԼՍ-ներն ու քաղաքական գործիչները կրկին անդրադարձան Բաքվում Խարամի հայտնած տեսակետին (պաշտոնական այցով այնտեղ էր ընթացիկ տարվա օգոստոսի 4-6-ը)՝ խնդրու առարկայի վերաբերյալ, որը համապատասխանում է ի սկզբանե պաշտոնական Թեհրանի որդեգրած դիրքորոշմանը՝ Իրանը ճանաչում է Աղրբեջանի տարածքային ամբողջականությունը: ԻԻԴ-ում ՀՀ դեսպան Գեղամ Ղարիբջանյանը սեպտեմբերի 8-ին այդ հարցի առթիվ լրագրողներին հայտնեց, թե դա պարզապես Խարամի խոսքերի ոչ ճիշտ թարգամանության հետևանք էր: Խսկ սեպտեմբերի 9-ին Ազգային ժողովի արտաքին հարցերի հանձնաժողովի նախագահ Արմեն Ռուստամյանը հայտարարեց. «Դա աղրբեջանական քարոզական գործունեության արդյունք է»:

Սակայն հարկ է նշել, որ իրականում Թեհրանի քաղաքականությունն այս հարցում ի սկզբանե որակվել է իրեն բարդ, քանի վերջինս շեշտը դրել է Աղրբեջանի՝ որպես իսլամական երկրի, տարածքային ամբողջականության վրա, մյուս կողմից՝ ՀՀ-ի հետ առավել սերտ փոխհարաբերություններ է հաստատել, որը բխում է ԻԻԴ-ի ազգային անվտագության անհրաժեշտությունից, հանգամանք, որի բերումով Բաքուն երբեք շահագրգռություն չի դրսերել Իրանի միջնորդության հարցում:

**Եմա ԲԵԳԻՉԱՆՅԱ**  
15. 09. 04

## Փ Օ Ս Ծ

### Ա Ր Հ Ծ Ը Թ Ձ Ե Ա Ծ Ա Ծ

- Արփինա Մանկասարյան, «Պուրճ Յամնուդը չի կարող ավելիին դիմանալ» (արաբ.), «Ալ-Սահար» օրաթերթ, Բեյրութ, 14. 01. 2004 (Լիբանանի Բուրջ Յամնուդ հայաշատ թաղամասի քաղաքավետարանի ճարտարագիտական բաժնի վարիչը՝ շրջանի բնապահպանական վատթար վիճակի մասին):

- Ակմեդ Ունալ, «Աղբամարի կղզին՝ ավերակներում» (թուրք.), «Չաման» օրաթերթ, Թուրքիա, 14. 05. 2004 (Ս. Խաչ Եկեղեցու անմիտիք վիճակի մասին):

- Յուսեյին Էռգյուրք, «Էրուվիզիոնի մրցույթը հայկական գրակցություն էր» (թուրք.), «Վաքք» շաբաթաթերթ, Ստամբուլ, 20. 05. 2004 (հակահայկական թշնամնաքով հոդված է, որտեղ հայերն «ամբաւանվում» են՝ թուրքերին սարսափելի տանջանքներ պատճառելու համար):

- Թարըկ Ծշըկ, «1915 թվականի մասին մտածել տարբեր տեսանկյունից» (թուրք.), «Ռադիօվալ» օրաթերթ, Թուրքիա, 27. 04. 2004 (հարցազրույց պրոֆ. Յալիլ Բերքբայի հետ՝ Հայոց ցեղասպանության ճամաչնան մասին):

- Ֆարիհ Ալբայլը, «Հաջորդը՝ Կովկասում. անհրաժեշտ է օժանդակել Հայաստանին» (անգլ.), «Ուուլ սթրիթ ջըրնալ», Նյու Յորք, 14. 04. 2004 (ՀՀ վերջին տարիների իրավիճակի վերլուծությունը):

- Ալեքսանդր Մարգիե, «Իմ լավատեսությունն ինձ երիտասարդ է պահում» (գերմ.), «Ֆրանկֆուրտեր ալգեմայն» ցայրունգ», Գերմանիա, 14. 03. 2004 (հարցազրույց Շարլ Ազնավուրի հետ):



- Ֆերայի Թերնչ, «Հայկական ցեղասպանության պնդումներն ու Բենեշի դեպքը» (թուրք.), «Հուլիսեթք» օրաթերթ, Թուրքիա, 11. 06. 2004 (Թուրքիայի՝ Եվրոպամիության անդամակցության հարցում Հայոց ցեղասպանության գործոնի շահարկման մասին):

- Ավելի Օգգյուրել, «Ուղիներ՝ իրականությունը պատմելու վերաբերյալ» (թուրք.), «Ռադիօվալ» օրաթերթ (Ստամբուլ), 30. 05. 2004 (Հայոց ցեղասպանության փաստը ճանաչել-չճանաչելու մասին):

- Խսմայիլ Յաղջի, «Հայկական հարցը և Արևոտքի վերաբերմունքը» (թուրք.), «Ամուրիթք» օրաթերթ, Թուրքիա, 23. 06. 2004:

- Ֆարուկ Յաջի Մուստաֆա, «Ի՞նչ կարելի է ասել հայ-թուրքական հարաբերությունների մասին՝ Հայոց կոտորածների մասին խոսելիս» (արաբ.), «Ալ-Սաֆիր» օրաթերթ, Բեյրութ, 10. 05. 2004 (թուրքական հարցերի մասնագետը գրում է Հայոց ցեղասպանության և հայ-թուրքական հարաբերությունների մասին):

# Սարմինը բգկպվեց, բայց սիրովն անխոցելի մնաց...



Երբ սկսվեց արցախյան շարժումը, Աղոթեզանի «սև ցուցակում» էր նաև Գանձասարը: Այն առաջին հերթին պատկերացնում էին իրեն զինանոց և փորձում գրավել: 1991թ. հուլիսին էր, երբ աղոթեզանական հրոսակները, զենք փնտրելու նպատակով շրջապատում են Գանձասարը, ծերբակալում սարկավագին՝ Յայր Սուլը Յովհաննեսին, պահակին, վարորդին և ստիպում ասել զենքի ու զինամթերքի տեղը: Մեկ օր պահելուց հետո նրանց բաց են թողնում, փոխարենը գյուղից մի քանի պատաճան տանում: Եթե «սիրտը» նվաճվի, ապա «մարմինն» անդամալոյն դարձնելու այնքան էլ դժվար գործ չէ:

1992թ. սեպտեմբերին, երբ թշնամուն հաջողվել էր Մարտակերտի գրեթե կեսը խոցելի դարձնել, Գանձասարի վիճակն օրիհասական էր: Թշնամին արդեն Կաղողասում էր, Գանձասարի փեշերին, գյուղ, որ Գանձասարից հեռու էր ընդամենը 3 կմ: Այդ օրիհասական պահին էր, երբ Վազգեն Սարգսյանն աննախադեպ շփոթված, այլայլված հայտնվեց հեռուստաելքանին և ժողովրդին ոչ թե իշխանական իրաման, այլ ամենաքեշ կետում կռվելու կոչ արեց: Յաջորդ օրն իսկ հավաքվեցին 500 կտրիճներ, սակայն նրանցից 360-ը մեկնեց առաջին գծում կըրվելու...

«Տղամեր, չի բացառվում, որ վաղը մեզանից շատերը մարտից չվերադառնան, բայց լավ իմացեք, նահանջելու տեղ չունենք, հետևում Գանձասարն է, առջևում՝ հայ ժողովրդի փրկությունը», - կրվից առաջ 120 մարտիկների նկրտելով՝ գտնեանդել է Գանձասարի առաջնորդը: Ակրտել է, Աստծո օրինությունը տվել և սուրբ մյուռնը կաթեցրել երդվյալների վրա, որ Աստծո աջը պահապան լինի կտրիճներին:

Ու լուսաբացին կենաց-մահու կրիվ տվին տղերքը. զոհեր էլ եղան, բայց կարողացան Գանձասարն անառիկ պահել: Ոսոյին համար այդքան բաղձալի 1,5 կմ ծանապարիք (թշնամին դիրքավորվել էր Գանձասարից այդչափ հեռավորությամբ գտնվող Կիրատափ՝ Գոյց տափ կոչվող բարձունքի վրա), ոչ միայն անհաղթահարելի, այլև դժոխային դարձավ:

Թեև թշնամու ոտքը Գանձասար, Վաճք չի մտել, բայց ինչպես Գանձասարը, այնպես էլ գյուղը բազմաթիվ անգամներ ոմբահարվել է: Առաջին ոմբակործությունը 1991թ. հոկտեմբերի 28-ին էր, երբ հակառակորդի ինք-

Ա րախի պատմաճարտարապետական հուշարձանների գոհարը՝ Գանձասարի վաճքը (այստեղից էլ գյուղի Վաճք անվանումը) գտնվում է շրջկենտրոնից 50 կմ հարավ-արևմուտք՝ Խաչեն գետի ձախ ափին՝ Արցախի ամենահին, պատմական հարուստ անցյալ ունեցող Վաճք գյուղի հարևանությամբ: Գանձասարի կառուցումն սկսվել է 1216 թվականին և տևել մինչև 1238 թվականը: Այն կառուցել է Խաչենի մեջ իշխան Յասան Զալայանը: Շուրջ 300 տարի առաջ հենց Արցախի մելիքներն են Գանձասարում գրել պարսկա-թուրքական լոից երկրամասն ազատագրելու նամակներ, խնդրագրեր և հատուկ պատվիրակների հետ ուղարկելու ռուսական ցարին՝ երկրամասը Ռուսաստանին միացնելու առաջարկությամբ:

նաթիրից «ՆՈՒՐՍ» տիպի հրթիռներ արձակվեցին Գանձասարի վրա: Երկուսը վաճիքի տանիքի վրա ընկած, մի քանիսն էլ՝ միաբանության շենքի վրա, և այն ամբողջությամբ այրվեց, փլատակվեց: Այդ ռմբակոծության ժամանակ զոհվեց 1, վիրավորվեց 2 հոգի: Գյուղն էլ շատ է ռմբահարվել ու ավերվել: Միայն ռմբակոծությունների հետևանքով 16 խաղաղ բնակիչ է զոհվել, իսկ պատերազմում 36 ազատամարտիկ:

Վաճիք գյուղն այսօր ունի 1400 բնակիչ և, ըստ համայնքի ղեկավար Ֆեղյա Օհանյանի, առաջնահերթ խնդիրը նոր դպրոցի կառուցումն է, քանի որ այն աճող բնակավայր է և ունի 250 աշակերտ, նախկին դպրոցն էլ փոքրություն է անում: Վաճիք այսօր բազում չլուծված խնդիրներ ունի, այդ թվում նաև՝ խմելու ջրի կարիք: Թեև վաճեցու հիմնական զբաղմունքն անասնապահությունն է, բայց նրա երեսը պարզ է անում նաև փայտամշակման կոմբինատը, որտեղ այսօր 150 հոգի է աշխատում: Արցախի բարեկարգ գյուղերից է, ճանապարհներն էլ բարվոք են, իսկ վերջերս գյուղի 36 զոհված ազատամարտիկների հիշատակը հավերժացնող հուշակոթողի կառուցումը վաճեցիների հոգսը մեկով պակասեցրեց:

Մարդու համար ամենամեծ բեռը, որն իր հետ միշտ տանում է, զղումն և դրանից ծնված ցավի զգացումն է: Փառք Աստծո, որ կարողացանք ոչ միայն Արցախի սիրտը՝ Գանձասարն անխոցելի դարձնել, այլև ամենամեծ բեռը թթափել. ազատագրվեցին Մարտակերտի գերյալ գյուղերը՝ բացառությամբ յոթի...

Այսօր շրջանում կա 41 համայնք, 43 գյուղ: Դիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն ու անասնապահությունն են:

Մարտակերտի ազատագրումից անցել է 12 տարի: Ինչպես է շրջանը ավերակներից շեն ու քաղաք կառուցում, հող ու սահման պահում: Այդ և մի քանի այլ հարցերի պատասխանեց շրջանի վարչակազմի ղեկավար Սլավա Շովելյանը.


#### - Ո՞րն է այսօրվա Ձեր առաջնահերթ խնդիրը:

- Առաջինը՝ բնակչությունն է, որ պատերազմում այրվել, ավերվել է: Մարդիկ այսօր տանիքը մի կերպ ծաշկել ու ապրում են, ուժ ու հնարավորություն չունեն ամբողջությամբ վերականգնելու: Այդ բնակարանների կառուցման, հարդարման աշխատանքների համար չկա համապատասխան ծրագիր: Զոհված ազատամարտիկների ընտանիքներ կան, որոնք նույնական պահովված չեն բնակարաններով: Արդյունաբերական օբյեկտներ գորեք չկան, բացառություն են հացի գործարաններ, ալրաբացը և Վաճիք գյուղի փայտամշակման կոմբինատը: Բնակչությունը հիմնականում աշխատում է սեփականաշնորհված հողահանդակներում, իսկ վարձակալված հողերում հիմնականում հացահատիկ ենք աճեցնում: Մտադիր ենք պահաժոնների կամ հյութերի արտադրություն հիմնել:

- Իսկ «Դայաստան» հիմնադրամի օգնությունը Մարտակերտ չի՝ հասնում...

- Իհարկե, հասնում է: Վաղուհասը հիմնովին ավերվել էր, հողին հավասարեցվել. ոչ մի կանգուն տուն չէր մնացել: Գյուղի վերականգնումն ստանձնեց արգենտինահայ համայնքը: Մյուսը Հյուսիս-հարավ մայրուղին է, որն աճեցնում է Մարտակերտով՝ Դիմբոն տանող ճանապարհով:

- Ձեր կարծիքով՝ առաջնայինը ճանապարհի՞ն, թե՝



Բնակարանի կառուցումն է...

- Ինչպես հասկացա, Դուք ուզում եք, որ հիմնադրամի միջոցները տրամադրվեն բնակարանների վերականգնմանը, այլ ոչ թե ճանապարհներին...

- Այո, կարծում եմ՝ առաջին հերթին պետք է վերականգնեն, բնակեցնեն գյուղը: Ո՞ւմ է պետք դատարկ շենքերով ճանապարհը...

- Ես կասեի, որ դա էլ անհրաժեշտ է, բայց ճանապարհն էլ շատ կարևոր է: Եթե սկսվեց դարաբայան պատերազմը, մենք ճանապարհներ չունեինք, և մարդիկ փախչում էին տարրեր արահետներով: Դիմնականում ներթին ճանապարհների բացակայության պատճառով էր, որ մարտական գործողությունների սկզբում գաղրի ճանապարհներին խաղաղ բնակչությունից մեծ կորուստներ, զոհեր ունեցանք:

- Իսկ շրջանի սահմանների պաշտպանությունը հուսալի՞ ծեռքերում է:

- Մարտակերտի սահմանները հուսալի ծեռքերում են. Ղարաբաղի բանակը ուժեղներից է, և իզուր չէ, որ այդ մասին խոսում են շատերը: Սահմանային գոտում ապրում ու աշխատում ենք առանց վախի ու մտահոգության, համոզված, որ բնակչության անդրդր պաշտպանվում է...

#### - Վերնակեցման համար արտոնություններ կա՞ն:

- Իհարկե, կան ծրագրեր, արտոնություններ, որոնք նոր հիմնվող գյուղերին են վերաբերում: Այսօր ունենք Նոր Կարմիրավան, Նոր Մարաղա, Շայկաջուր, Շայկաշեն, Նոր Այգեստան, որտեղ բնակարանների թիվն անցնում է երեսունից, և բոլորն առանձին գյուղերի կարգավիճակ ունեն: Կառուցվել են նոր դպրոցներ: Մտահոգված ենք նաև Թալիշի հոգսերով: Մեծ գյուղ է, 120 ընտանիք վերադարձել է: Որպեսզի նպաստենք ներգաղթին, պետք է բնակարանային շինարարության մեջ ծրագրեր իրականացվեն:

**Ամայա Եղիգարյան**

## ԵՎՐՈՊԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՈՐՊԵՄ ՈՒՂԻՌ ՃԱՆԱՊԱՐՀ

**Մ**եր քաղաքական բառապաշարի պարտադիր բաղադրիչը դարձած «Եվրոպական չափանիշներով ապրելու» ծգոտումն այսօր հնչում է որպես ՀՀ քաղաքական վերնախավի (Երկրի նախագահից մինչև վերջին չինովնիկը), ամենատարածված կարգախոս: Այդ դատարկաբանությունն առավել հաճախ հընչեցնում են «Եվրոպական քաղաքակրթությամբ» հիպոսացված նրա շատախոս երկրպագումերը՝ ՀՀ Աժ ամբիոնից: Եվրահինտեգրացումը թյուրիմացաբար համարվում է ազգային-պետական բոլոր հարցերը լուծելու, հատկապես ժողովրդավարություն հաստատելու, կոռուպցիայի և կաշառակերության դեմ պայքարի համարաժամ: Ըստ որում, ոչ ոք ընթանելիորեն չի բացատրում, թե որն է այդ չարչրկված «Եվրաչափանիշը», որին մենք պետք է համապատասխանենք և հասկանալի չէ ինչ պահանջներ են պետք «Եվրոպական ստանդարտներին» համապատասխանելու համար: Բայց չէ՞ որ Եվրոպան պատմական արմատներ և ընդհանուր մշակույթ, քաղաքական կազմակերպնան մակարդակ ունեցող ժողովուրդներից բաղկացած մեկ «ռասայական ընտանիք» չէ...»

Դրսեկ արտահայտություններով զարմացնելու հակում ունեցող մեր «Եվրառաջամարտիկներից» շատերն է, ինքնաերևակայելով որպես քաղաքական պահանակի հեղինակություններ, քաղաքագիտական իրենց տկար պատրաստականության պատճառով խճողվել են լավ չնարսած հասկացություններից բավիրներում, Եվրոպական հանգով ազատականություն ու ժողովրդավարություն, գումարած՝ «մարդու իրավունքներ» են բարբաջում, իրենք իսկ չպատկերացնելով, թե դա ինչ բան է: Այդ դեպքում, արժե՞ գլուխներս կոտրելով կիկին ու անվերապահ դեպի ներեւողոպական երկրների ու ազգերի խառնարան նետվենք:

### ՄԵՐ ԻՆՉԻ՞Ն Է ՊԵՏՔ ԵՎՐՈՊԱԾ

«Զինված» քաղաքական անգիտությամբ, ամպագոռոցո խոստումներով ուղեկցվող քաղաքագիտական մեր տկար երևակայությամբ ու տիհաս պատկերացումներով, թալանված, նվազագույնի հասցված տնտեսական վտիտ կարողությամբ, գավառական մոդեռնիզմի հանգով շուկայական հարաբերություններ ենք կառուցում և ազատականում, փանջունհարար խոնարիվում վարկ ու «ծրագիր» առաջ եկողների առջև:

Ամենազավեշտականը, իհարկե, անճոռնի կոկետությամբ «Եվրաչափանիշներով» ապրելու փորձերն են, ինչպես Յակոբ Պարոնյանը կասեր՝ «ալաֆրանկա» խաղալը: Փայտէ ձի «հեծած»՝ Եվրոպա ենք արշավում ու խելակորույս փորձում «խնտեգրվել» Եվրոպական կառույցների մեջ: Ընդ որում, այդ ինտեգրումը հայաստանյան որոշ շրջանակներում հնչում է որպես անպայման ԱՊՀ-ից հրաժարվելու հրամայական: Այդ նպատակով գավառային մեր Եվրահինտեգրատորներն ավելի քան մեկ տասնամյակ է կապվելով «ընթացակարգ» ու «ծրագիր» են մշակում, «հանակարգում» ու «կանոնակարգում», ամեն մի անշան քան «գործընթաց» սեպում, ինչի ձեռք են տալիս

«ռազմավարական» է դուրս գալիս... «Թափառող սյուժեներով» հմայված՝ սերեթելով ձգողում ենք «Եվրոպական չափանիշներով» ապրելու կերպի: Օպերետային հանգով «ժողովրդավարանում» ենք և հտպիտի փիլոն վրաներս քաշած ու «տրտինգ» տալով մեխանիկորեն ժամանակակից բարեկեցիկ, քաղաքակիրք երկրի դիմակահանդեսային նանանակում խաղում:

Եվրոպական արժեքների համար ճանապարհ բացելու նպատակով մեր տեղական ջանացողները նախօրոք սեփական ազգային արժեքները բքակոծեցին: Երկրի գործերն իրենց իսկ «գործուն» մասնակցությամբ ձախողելու համար գրեիկ սուրբելսիվության հանգով ինչ-որ «բնածին» ու «բնականոն» պատճառաբանություններ են հերյուրում: Անձի արժեքային յուրովսանն կողմնորոշումներով ու բարոյաքաղաքական դաստիարակության չափանիշներով մեզ ուզում են «համապատասխանեցնել քաղաքակրթության չափանիշներին»:

Տեսանելի արդյունքն առայժմ «Եվրանորոգված» «օֆիսներն» են, չինովնիկների «Եվրոպական» նիստուկացն ու կենցաղային գերճիշությունը...

Կյանքը նաև ցույց տվեց, թե մերովի «արևմտանալուց», «Եվրոպականանալուց», «ղենոնկրատանալուց» ու «զագատչուկայականալուց» և այս գործում անդուվկիանոսյան խորհրդականներին համբակի պես հետևելուց ինչ դուրս եկավ: Սա ասում ենք ոչ թե նրա համար, որ դեմոկրատիայի ու ազատության գաղափարները ՀՀ-ին պետք չեն, այլ որ գլխավորը ոչ թե ինչն է, այլ ինչպեսը, այսինքն՝ ինչը վերցնել Արևոտքի օրինակելի-ցուցադրականից և ինչպես օգտագործել բոլորովին այլ կերպ կառուցված դեմոկրատական մոդելները: Եվ քանի որ խոտոր ուղով ընթացանք, արդյունքում մեզ բաժին հասան նորագո, գողաբարոյ, բյուրոկրատիզմ, թերուս ու դատարկախոս պառլամենտարիզմ, աննախադեպ ապականվածքարբեր:

Ցուցադրվում է մեկ այլ զավեշտախաղ: Արդեն իսկ իրեն «Եվրազնտանիքից» անդամ երևակայող նորընծան մեր քաղեքնու պահվածքն ու նորաբառերով լեցուն խոսելանքը հագեցած են ընտրախավային ընդգծված բացահանդանությամբ, ինքնավատակ մեծամտությամբ: Եվ, ընդհանրապես, մեր չինովնիկական բառապաշարն իսկական զավեշտ է: զգվեցնելու աստիճան խոսում են «դրավական դաշտից», ընդհանրապես, հասարակական կենսագործումներության բոլոր ոլորտները խորհրդանշող «դաշտերից» (քաղաքական, ֆինանսական և հարկային դաշտեր, մնում են մագնիսական ու էլեկտրական դաշտերը) առանց անհրաժեշտության օգտագործելով անհեթեր եզրաբանական այս մաստակը: Ավելին՝ ծանծանքացներու չափ հոլովվում է այլ հորիզոններում քաղաքական-կառավարչական միանգամայն այլ իմաստ ունեցող, իսկ մեզանում գողալեզու-կորպորատիվ երանգներով շղարշված օտարամուտ «թիմ» արտահայտությունը: «Յանամարդկային-տիեզերական» մտածողության այս ցույցը, իրականում, սեփական երկրի որոշակի սոցիալ-քաղաքական պատասխանատվությունից խուսափելու ամբո-

խավարական միջոց է: Արևմտամետ ինտելեկտուալ երևալու կեցվածքն ավելի շուտ սեփական անձարակությունը հաղթահարելու ինքնամոռաց պատրանք է: Այդ ամենը ննան է քանաչայով Բեթհովեն նվագելուն կամ էլ խոլ ծայրանասի թատրոնում Շեքսպիր բեմադրելուն...

Գավառացու չտեսությամբ այնքան են բարբաջում «քաղաքակրթվելու», «համամարդկային» քաղաքակիր խաղի կանոններով ապրելու մասին, որ պետք է ենթադրել, թե հայերս մինչ օրս ապրել ենք հեռավոր, անզան քաղաքակրթություն չհիշեցնող մի կյանքով: Մեր «ազգային» «Եվրաքաղաքակրթիչները» կամ երկնքից են իշել, կամ էլ՝ Օքսֆորդի ու Սորբոնի լսարանից նոր են դուրս եկել...

## ԵՎՐՈՊԱՅԻ ԻՆՉԻՆ Է ՊԵՏՔ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Համառորեն չկորցնելով Հայաստանն ու հայերին քաղաքակրթելու-Եվրոպականացնելու հույսը, դրամաշնորհների ու «ծրագրերի» տեսքով վճարելով, որ շարժվելու տեղ չունենանք, շարունակում են մեզ «մոնիթորինգել»... Ունանք գալիս ուտուն-խմում, մակերեսայնորեն տպավորվում են «ՀՀ-ում ընթացող ժողովրդավարական բարեփոխումներից»: Մենք էլ հյուրընկալ տաճտիրոջ սեղանի շուրջ որպես զուտ քաղաքավարական նրբավարության դրսարում հնչած հավուր պատշաճի գովեստները հուզախնեղ ընդունում ենք հալած յուղի տեղ: Մինչեն ով ով, բայց ՀՀ-ն ողողած և մեր Վիտխ թարիկից բռնած դեպի «կապիտալիստական դրախտ» ուղեկցող նեոնիշոներու պետք է խորհուրդ տային, որ այլոց կենսափործի արդյունքը, սեփական իրականության մեջ պետական կառավարման կուրորեն ընդորինակված օտարը, երբեմն պարտադրված, մեխանիկորեն կրկնելով-պատճենահանելով ու անմտորեն տեղահարմարել փորձելով ճգնաժամ չեն հաղթահարում և ոչ էլ բարեփոխումներ իրականացնում, առավել ևս՝ քաղաքակիր զարգացման մայրուղի դուրս գալիս:

Ամեն մի իսկական քաղաքագետ լավ գիտե, որ բազում հնարավորություններից ամենանպատակահարմարն այն է, որն արտացոլում է իրական վիճակը կամ համահունչ է դրան: Այլ կերպ ասած՝ ամեն մի ժողովրդի պետական-հասարակական կառուցվածքն անպայման պետք է բավարարի որոշակի պահանջներ. այն պետք է լինի հասարակության կազմակերպման լավագույն տարբերակը, մերձակից լինի նրա ինքնատիպությանը և սեփական ժողովրդի համար ստեղծի նույնականացման լավագույն պայմաններ:

Հասարակական զարգացման օբյեկտիվ օրենքներից ու առաջընթացի միտումներից զատ ամեն մի երկիր կարող է լուծել միայն այնպիսի հարցեր, որոնք թույլ են տալիս նրա պատմամշակութային կենսափորձն ու ազգային պալանությունները: Այսինքն՝ երկրի հավակնությունները պետք է համապատասխանեն իր ժողովորի հիգիենիստավածքին, ազգային ոգում, կենսակերպին, պետականաստեղծ էլերանը, աշխարհներակալման ու մտածողության համակարգին: Խսիտ կարևոր են սեփականատիրման և բաշխման հարաբերությունները, արժեհամակարգային ու սոցիալական պահանջները, հոգևոր-մշակութային բնութագիրը, նյութական ու մշակութա-կենցաղային պահանջները, հողի և բնական պաշարների օգտագործման պատմամշակութային, երնոժառանգական, էքսուտեսական առանձնահատկությունները, չափորոշիչները: Յայ «բարեփոխիչների» խնկարկած և անհեթեթության հասցրած, քարոզմերը Եվրացենտրիզմի գաղափարները, Եվրաչափանիշներով ապրելու պատկերացումներից շատերը գիտականորեն հիմնագործ են:

Ավելին՝ երբեմն այդ ամենն իրավիճակային, փոփոխական առասպեկտների ու ծայրահեղական գաղափարների բառախանությունը է: Ամեն ինչ իրար է խառնվել... Շուրջ մեկ և կես տասնամյակ մեր ժամանակը կանգ է առել:

Ազգային գաղափարախոսության և արժեքային համակարգից բխող, երկրի դարավոր կերպի ներդաշնակությունը չխախտող ներմուծված լավ ու փորձված ծրագրերով կարելի է անվտանգ առաջընթաց ապահովել: Եթե Եվրախնտեգրումը ընկալվում է որպես երկիրը ոտքի կանգնեցնելու պայման, ողջունելի է: Բնական է ձգոտմը հանուն ժողովրդավարության, քաղաքացիական հասարակության, շուկայական հարաբերությունների, ավելի բարձր քաղաքակրթության: Սակայն պետք է իրատես լինենք և ավելորդ հոլյուսերով չսնվենք: Եվրոպայից մենք զգալի հետ ենք մնում նախ և առաջ տնտեսությամբ և կենսամակարդակով, իսկ հավասարվելու համար մեկ տասնամյակը չի բավականացնի: Բացի այդ, անճրունակ լինելու և մի շարք այլ պատճառներով մենք դեռևս ի վիճակի չենք լինի օգտագործելու այն բոլոր հնարավորությունները, որոնք կարող է տրամադրել Եվրոպան: Մենք ունենք նաև տարածաշրջանում չլուծված խնդիրներ: Եվրոպայի առաջարկած «նոր հարևանություն» ծրագրի մեջ մտնելու առաջ պետք է կարգավորենք հարաբերությունները մեր վաղենի, անմիջական հարևանությունը հետ: Եվ հետո՝ մինյանցից խոր վիհով բաժանված, ուրագն մեկ բռաչափ գերիհարուստների և ունեցուր մի ամբողջ ժողովրդի կենսավիճակով գրեթե անհնար կլինի սոցիալական հոծ ու քանձին միջին շերտ ունեցող արևմտյան ընտանիք մտնել: Պարզապես կհայտնվենք աղքատ բարեկամի կամ թելադրանք կատարողի վիճակում:

Այնպիսի տպավորություն է ստեղծվել, որ մեզանուն ամեն ինչ, այդ բվում՝ ընտրությունները, արտասահմանցի դիտորդներին և նրանց առաքողներին բավարարում տալու համար են: Ինքնաստորացման աստիճան վկայակոչում են, ինքնակոչ Եվրադիտորդների, և ոչ թե՝ սեփական հասարակության կարծիքը: Երբեմն էլ առանց ազգային շահի և արժանապատվության հաշվառման՝ աշակերտի պես բարոյաքաղաքական պարտավորություններ են ստանձնում դիտորդ-խորհրդականների առջև: Իրոք ողբերգություն է, ազգային խայտառակություն, երբ անկար իր միջից դեկավարողներ ընտրելու, սեփական տանը արդարություն հաստատելու համար մի ժողովուրդ դիմում է օտարի միջամտությանը. Թող որ դա լինի ամենադեմոկրատական ու բարձրակիրը Եվրոպացի: Ել ավելի մեծ խայտառակություն է, երբ երկրի իշխանությունները, ժողովրդի կամարտահայտումն ու վճիռը հարգելու փոխարեն, Արևմտության պատճի առաջ ավելի շատ հաշվետու են համար սահմանները: Բանը հասնում է «պարտավորությունները» չկատարելու համար Եվրակառույցներից վերնելու ինքնադատաստանի, հատուկ մոնիտորինգի սպառնալիքների:

Այսուհանդերձ, որքան էլ գայթակի ու անամապ լինի Եվրոպայի հետ մեր փոխարաբերությունների ներկան և հեռանկարը, դրա իրական ծավալն ու բովանդակությունն առայժմ խորհրդանշական են: Այսինքն՝ Եվրոպայի հանդեպ մեր անվեռապահ սերը փոխադարձ չէ: Խան՝ Եվրոպան դեռևս չի հստակեցրել մեր իր «նոր հարևանի» հետ փոխարաբերությունների հայեցակարգային չափորոշիչները: Այդ է վկայում առևտրական հաշվեկշիռի մեծ անհամաշփորչությունը: Եվրոպայից մեր բարեփոխումների համար սպասավոր տնտեսական օգնությունը մնում է չնյութականացված: Ավելին՝ ՀՀ-ի հետ կնքված գործըն-

Կերության և համագործակցության պայմանագրի հիմնարար արտոնությունների ոչ մի կետ գործում: Ավելին՝ ՀՀ-ի հետ վերոբերյալ համաձայնագրի կարգավիճակն ավելի ցածր է, քան Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի մի շարք երկրներինը:

Եվրոպայի մեջ հնտեղաման նպատակով, ինչպես ցույց է տալիս փորձը, Բրյուսելի և Եվրոպական այլ մայրաքաղաքների բարեհանության արժանանալու համար առաջսոր արված մեր գիշումներն արժանացել են ոչ միայն նրանց հանդիպակաց քայլերին, այլ սրանց գործակալների՝ մեզ անթաքոյց ներկայացվող նորանոր պահանջների աստիճանական ծավալնանը, համոզված, որ վաղ թե ուշ ՀՀ-ն տեղի կտա Եվրոպայի յուրաքանչյուր պահանջին: Որպես ՀՀ-ի և ընկերակցության միջև տնտեսական կապերի հաստատման առաջնային պայման՝ պահանջվում է օրենսդրությունների նույնականացում, այսինքն՝ Եվրոպականի հետ մեր օրենսդրության համատեղելիություն: ՀՀ-ին պարտավորեցնում են հրաժարվել ինքնուրույնությունից, ազգային անվտանգության այնպիսի կարևոր ոլորտում, ինչպիսին տնտեսական իրավունքն է: Դա անհամարեա երևույթ է պետությունների հարաբերությունների պատմության մեջ, երբ միջազգային հարաբերությունների մեկ սուբյեկտ պահանջի մյուսից այս կամ այն հարաբերությունների ոլորտում, որպես նմուշ, ընդորինակել իր օրենսդրությունը:

Ես «Եվրասկեպտիկ» չեմ: Այսօր առավել ևս ինտեգրություն է պետք: Դա պարտադիր քայլ է ինտեգրացիոն ներդրումների ամի, գիտելիքների ու տեխնոլոգիաների ձեռքբերման, գարգացած երկրներին յուրահատուկ արժեքների՝ բիզնեսի կազմակերպման և իրականացման ձևերի յուրացման, ներդրումների, նորարարությունների և իրավական նորմերի պակասը լրացնելու, ներքին շուկայի սահմանների ընդլայնման գործում: Պարզապես հարկավոր է մեր մշակույթը յուրովի համարել Եվրոպականի հետ և այդ կերպ մտնել Եվրոպական ազգերի համաշխարհի: Ընդունելով այլածին գաղափարներ՝ հայր միանգամից չի փարզել դրանց ուղարկումը և ազգայինը: Այդ հատկանիշն էլ դարձել է հայոց հարատևման, արտաքին մարտահրավերներին դիմակայելու հիմնական գործներից մեկը:

Անկախությունն ու ազատությունը գարդարելով «Եվրոպականանալու», «Եվրաքաղաքակրթության» մեջ մտնելու և նման այլ որոշչներով, հասցում է անհերթության: Ոնանց համար աղանդավորության անարգել տարածումը, անսան սեքսի, համասեռականների ու միասեռականների ամուսնությունների ազատության, մարմնավաճառության օրինականացման, բռյֆրենդին օրինական ամուսնուց գերապատվություն տան էլ հենց ազատության ու անկախության դրսնորում է և «քաղաքակրթական դեմոկրատիայի» գագա՞ր:

Կոմպլեմենտարիզմից բխող մեր իշխանությունների քաղաքականության տրամաբանությունը, հավանաբար, կարելի է ընկալել հետևյալ կերպ. Եվրոպական կառույցին փութանցիկ հնտեղարումը կնպաստի ռազմավարական այլընտրանքների հետագա հստակեցմանը և Մոսկվայի ու Վաշինգտոնի քաղաքականության գիգագներից ՀՀ կախման նվազեցմանը: Այս հաշվարկը սխալ է առնընվազն երկու պատճառով. նախ ինչպես ասվել է, մի շարք չափորոշիչներով ՀՀ-ի անպատճառ լինելը, և երկրորդ մեր շահերի ու պահանջների հետ Եվրախորհրդի դեկագրավների հաշվի նստելու կայուն երաշխիքների բացակա-

յությունը: Չպետք է մոռանալ, որ տարածաշրջանում աշխարհաքաղաքական շահերի թելադրանքով զրացող Եվրամիության (ինչ ԱՍՍ-ի) ազդեցությունը, մեղմ ասած՝ մեծապես հակասում է ՀՀ-ի ազգային շահերին: Առաջին հերթին այն պատճառով, որ գերտերությունները մեծ տեղ են հատկացնում Թուրքիային՝ որպես տարածաշրջանային առաջատարի: Ներկա պահին սա ներքին սպառնալիք է Արցախյան հիմնախնդրի լուծման տեսակետից, ազգային անվտանգության բարդ խնդիրներ հարուցող սպառնալիք:

Հիշենք՝ ինչպես Եվրախորհրդուր թուրքերի ճնշմամբ դատապարտեց ԼՂՀ-ում նախագահական և տեղական հնքնակառավարման մարմինների վերջին ընտրությունները: Տեսանելի է նաև Եվրոպական կառույցներում ՀՀ ինտեգրացման կեղծ նախադրյալների վրա հենված քաղաքականության արդյունքը: Հիշենք թեկուզ դրսի վերաբերմունքն աղանդավորների նկատմամբ մեր մոտեցումներում, զինծառայության, մահապատժի վերացման և այլ օրենքների բնարակումներում: Մեր օրենքները պետք է ընդունվեն երևանում և ոչ թե՝ Բրյուսելում: ՀՀ-ն պետք է առաջնորդվի սեփական և ոչ թե Լիխտենշտեյնի օրենքներով: Արդեն սովորություն է դառնում առանց մեզ հետ հաշվի նստելու մեզ պարտադրել ոչ միայն բոլոր հնարավոր հիմնախնդիրների լուծման Եվրոպայում փորձված համընդհանուր որոշումներ, այլ նաև հարցեր, որոնք մեզ պետք է լուծենք՝ մեկուսացման մեջ չհայտնվելու և «բանադրանքի» չարժանանալու համար...

Զուգադրելով մեր երկու ներկա վիճակը և ինտելեկտուալ ներուժի առկայությունը, մեր ժողովուրդն իրավունք ունի ակնկալել դեկավարության ամենաբարձր մակարդակով սեփական երկրի գործերը սեփական խելքով վարելու հնարավորություն: Միթե մեզ դաս չեղան արտասահմանի անամոր հուշարարությամբ համակարգափոխության, ավելի ճիշտ՝ սոցիալիզմից կապահանգման վերաբանություններն ու ձախավեր բարենորդչությունը, հատկապես ապագետականացումն ու հասարակական գործերի կառավարման հարցում պետության դերի անհեռատես զրյականացումն ու նրա անտրամաբանական ինքնարացմարկը, սեփականատիրման և բաշխման հարաբերությունների շարունակվող, աղետաբեր քառորդը: Հնարավորինս արագ մեղմել է պետք «միջազգային չափանիշներին» չհամապատասխանող «ազգային նախապաշտումներից» զարգացման մեջ չհաջութական հարձակման և «սեքսուալ հեղափոխության» ներդրման աղետալի հետևանքները:


Հետխորհրդային երկրների մեծ մասը, վաղ թե ուշ, քրափեց աջազատշուկայական ռումանտիզմը, հաղթահարեց հարկադիր փոխակերպման դժվարությունները և նվազագույն կորուստներով զարգացման մայրուղի դրւս եկավ: Մինչդեռ, ունենալով շատերից զրոյել տնտեսական-մտավոր նախահիմք, մենք տեղապստույտ ենք տալիս՝ շարունակելով ինչ-որ անհականալի ու մշուշապատ «անցումային» փուլի եռուքորդը: Լիարժեք անկախության և բարենորդման պայմաններում ապրելու մեր ծագումը ճամարտակություն է: Մենք ճախողեցինք մեր ներկան և դեռ շատ երկար ճաշակելու ենք դրա դառնությունը: Անցած տարիները ցույց տվեցին, որ մեր նացինալ-ռեֆորմատորների ընտրած ուղին խստոր է ու անհեռանկար և միտված է ոչ վաղ անցյալի մեր հարուստ ներուժի իսպառ ոչնչացմանը, ապապետականացման բոլոր տակ սոցիալ-տնտեսական ծավալուն վնասարարության հավասարագոր «մեծ կողոպուտի» հրագործմանը:

## ԱՐՄԵՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ



# ԹԱՆԷՐ ԱՔԶԱՄ ԿՐԿԻՆ ԿՈ ԽՕՍԻ ՀԱՅ-ԹՈՒՐՔ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹԵԱՅ ՈՒ ԼՈՒԾՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ

«Սանսիրսիւզ» լրատու կայքը 23 Յունիս Չորեքշաբթիի իր լուրերուն առջնիքը հրատարակած է Երթան Կիւնի կողմէ Թորոնթոյի մէջ պատմաբան Թանէր Աքչամի հետ կատարուած հարցազրոյց մը, որու ընթացքին Աքչամ կը պատասխանէ «հայկական ցեղասպանութեան» առընչութեամբ հարցումներու: Ինչպէս ինք ալ կը յայտնէ, Թանէր Աքչամ առաջին թուրք պատմաբանն է, որ ընդունած է, թէ հայկական ցեղասպանութիւն մը տեղի ունեցած է Օսմանեան շրջանին: «Սանսիրսիւզ» լրատու կայքը դիտել կուտայ, որ Թանէր Աքչամի հետ կատարուած հարցազրոյցը կը հրատարակէ առանց ստորակետի մը իսկ դիպչելու: Դարցազրոյցը շատ երկար է, բայց է նաև շատ հետաքրքրական: Թարգմանաբար արձագանք կը հանդիսանանք՝ շատ փոքր հապալումներով:



- Մոնրէալի եւ Թորոնթոյի մէջ Մայիսին պաշտպանեցիք այն տեսակէտը, թէ հայկական ցեղասպանութիւն կատարուած է: Հիմա դարձեալ Թորոնթօ պիտի Երթաք: Ինչո՞ւ:

- Օգոստոսին պիտի դասախոսւեմ Մինէսորա համալսարանի եւ Զօրեան հիմնարկի կողմէ կազմակերպուած ամառնային դպրոցի մը մէջ:

- Այս բանախօսութիւններու ընթացքին, բացի ակադեմականի ծեր ինքնութենն, ուրիշ որեւէ կուսակցութեան կամ կազմակերպութեան մը բանքերի պարտականութիւն ալ կը կատարէ՞ք:

- Ես 1986ին վերջ տուի քաղաքական գործօն աշխատանքիս: Այդ շրջանին Փքքի հետ արկածախնդրական կապէր ունեցայ: Կը ջանայի ճախակողմեան շարժումի մէջ ժողովրդավար համակարգ մը ստեղծել, սակայն Փքքի թիրախը դարձայ: Բազմաթիւ բարեկամ գործակիցներս սպաննուեցան: Ես ալ վերջ տուի քաղաքական գործունեութեան: 1988 էն ի վեր կ'աշխատիմ միայն որպէս ակադեմական:

- Այս աշխատաժողովներուն ընդհանրապէս հայկական կազմակերպութիւններն են, որ ծեզ կը հրաւիրեն, այո՞:

- Ամերիկայի մէջ՝ այո, բայց Եւրոպայի մէջ այդպէս չէ: Գերմանիոյ թուրք միութիւններն ալ հրաւիրներ կ'ուղղեն: Նպատակս Թուրքիոյ «մէսաժ» մը տալ չէ: Այդպիսի գործունեութիւն մը չունիմ: Եթէ վերջերս յաճախակի կերպով հրաւիրներ ստացայ, պատճառն այն է, որ առաջին անգաւուն գիրքիս հրատարակիչը գիրքը ծանօթացնելու հա-

մար զանազան հաւաքոյքներ կազմակերպէց ին ալ մասնակցութեամբ: Հոն օրենքը այդպէս է:

- Դուք, երբ սկսաք զբաղիլ պատմութեամբ, ուղղակի հայկական պատմութիւնն էր, որ ուսումնասիրեցիք:

- 1988ին սկսայ աշխատիլ Օսմանեան աետութեան մէջ գործադրուած տանջանքներու վրայ: Այս մասին գիրք մը հրատարակեցի, կանգ առած էի Ապտիւհամիտի շրջանին վրայ: Մեր կ'աշխատի այդ ժամանակաշրջանի վրայ, տեսայ որ 1894-1896 թուականներուն սպաններ կատարուած էին: Այս երկու տարիններու ընթացքին 12-13 նահանգներու մէջ, Ապտիւհամիտի կազմակերպումով, սպաննուեր են աւելի քան 100 հազար հայեր: Այս կարդալով՝ սկսայ հետաքրքրուիլ: Արդեն բոլոր թուրք մտաւորականներուն մտքին մէջ այս հետաքրքրութիւնը կայ: Անէն մարդ այս խնդրին կը նայի որպէս «բարդ եւ մուռ հարց»: Ես ալ շատերու նման կ'ըսէի. «Կ'երեւի թէ բաներ մը պատահեր էին»: «Բաներ մը պատահեր են, բայց կ'երեւի, թէ երկու կողմերն ալ յանցաւոր են», «Դայերն ալ քիչ բան չեն ըրեր»: Քանի հետաքրքրութիւնս օգրացաւ, այդքան նոր բան ձեռք բերի: 1991էն ի վեր կ'աշխատիմ այս նիւթի վրայ:

- Զեր երնիք ծագումին մասին բացատրութիւն կուտա՞ք: Զեր երնիք ծագումը դեր մը կը կատարէ՞:

- Այս հարցուն ալ հիմա նորաձեւութիւն դարձաւ: Վերջին 10-15 տարիններու ընթացքին երնիք ծագում կը հարցնեն: Իրաւ, որ ես հարիւր տոկոս թրքական արիւն ունիմ: Մեզի Կարսի մէջ Աղըսքացի թուրքեր կ'ըսեն: Բայց ասոնք կարեւոր կետեր չեն: Ես ակադեմական մըն են,

այդքան:

- Դուք առաջին թուրք պատմաբա՞նն եք, որ կ'ըսէ, թէ «Անատոլովի մէջ հայկական ցեղասպանութիւն եղած է»:

- Որքան որ գիտեմ այդ: Բայց պէտք է ուշադիր ըլլալ: Մէկը կրնայ ելլել եւ ըսել, որ այսինչ անձը, աւելի առաջ ալ այսինչ տեղը ակադեմական աշխատանք տարած է: Կրնաք վստահ ըլլալ, որ այս նիւթի շուրջ առաջին թրքերն իրատարակողը եւ են, այս նիւթի շուրջ յստակ կերպով թրքերն խօսողն ալ են են:

- Թուրքիա ի՞նչ կը շահի կամ կը կորսնցնէ, եթէ ցեղասպանութիւնը ընդունի:

- Չեմ կարծեր, որ կորուստ մը ունենայ: Ընդհակառակը, կը շահի: Միջազգային բեմահարթակի վրայ բարձր վարկ կը ստանայ: Օրինակ, ոչ մէկը Գերմանիան կ'ամրաստանէ, երբ Գերմանիա կը խօսի իր պատմութեան մասին: Ընդհակառակը, Գերմանիան իբր օրինակ ցոյց կը տրուի: Ցեղասպանութիւնը ճանչնալ շատ կարեւոր է Թուրքիոյ ժողովրդավարացման տևսակէտ: Ժողովրդավարութիւնը լայնախոհութեան, եղբայրութեան եւ հաւասարութեան մշակոյթ մըն է: Այս ալ կ'իրագործուի անցեալի մէջ գործուած անիրաւութիւններուն մասին բաց ի բաց խօսելով: Եթէ դուն վխալներոյ ծածկես, չես յաջողիր լաւ մարդ մը ըլլալ: Թուրքիոյ երկրորդ շահը պիտի ըլլայ Անատոլովի մէջ հայկական մշակոյթի հետքերը օգտագործել: Օրինակ, եթէ Ամի երթաք, հոն հայոց մասին մէկ բառ անգամ չէր կրնար տեսնել: Մինչդեռ եթէ Ամին վերանորոգենք եւ բանանք, ամէն տարի միլիոնաւոր տուլարներ կը ստանանք:

- Լաւ, հայկական կազմակերպութիւնները ի՞նչ կը շահին, երբ գիտակից կամ անգիտակից մղումով կ'ըսեն, թէ «հայկական ցեղասպանութիւն» պատահած է:

- Անոնք բան մը շահելու համար չէ, որ այդպէս կը խօսին: Շատ պարզ հարց մը ունին: Ի վերջոյ անոնք մեծցեր են առանց հօրեղբայր մը, մօրեղբայր մը, մօրաքոյր մը ունենալու: Իրենց ծնողներուն կամ Վերապրոյ ազգականներուն լացը տեսնելով մեծցեր են: Ուստի եթէ անոնց պատմութիւնը լսէք, հարցը աւելի հասկնալի կը դառնայ: Սա պահուն ամենամեծ հարցն այն է, թէ Թուրքիա չ'ընդունիր, թէ անիրաւութիւն մը եղած է հայերու: Կնոջական բռնաբարումներու դէպքերէն, գիտենք, բռնաբարուած կիներու ամենամեծ հարցն այն է, թէ ուրիշներ չեն ընդունիր այդ կիներուն դէմ գործուած անիրաւութիւնը: «Դուն ալ բնաւ յանցանք չունի՞ս» կը հարցնեն: Զանգուածյաին հոգեբանութիւնը այսպէս է: Ուստի այդ հաւաքականութիւնը պէտք է բուժել իր ենթարկուած անիրաւութիւնը ընդունելով:

- Երբ պատմութիւնը կը կարդանք, կը տեսնենք որ պատմաբանները ցեղասպանութեան համար կուտան զանգազան թուականներ: Ոմանք՝ 1915-1917, ուրիշներ 1915-1923: Կրնա՞նք հասկնալ, թէ որը ծիշը է:

- Չէր կրնար: Որովհետեւ ամէն մարդ տարբեր պատասխան մը կուտայ: Ես կ'ընդունին 1915-1917 թուականները: Շատ ծիշը չեմ նկատեր ցեղասպանութեան շարունակութիւնը որակել 1918-1922 թուականներուն պատահածները:

- Ուրիշ վիճաբանութիւն մըն ալ կը կատարուի սպանուած հայերու թիւին վրայ: Ոմանք 1.5 միլիոն կ'ըսեն, ոմանք՝ 800 հազար, ոմանք ալ՝ 1 միլիոն 100 հազար:

- Այս ալ կարեւոր չէ: Ակադեմականները շատ կը խընդան, երբ թիւի վրայ բանավէտ կը կատարուի: Եթէ սպանուածներուն թիւը 1 միլիոն չէ, 800 հազար է, պիտի ըսենք, որ ցեղասպանութիւն չէ՝ պատահած: 600 հազար

հոգի ալ ըլլայ ցեղասպանութիւն չէ՝ պիտի ըսենք: Այստեղ ստեղծինի եւ վարունգի մասին չէ, որ կը խօսինք: 600 հազար հոգի: Այի Սամի Եւն մարզադաշտը 20 հազար հոգի կ'առնէ: Այս մարզադաշտը 30 անգամ պիտի լեցնես եւ պիտի պարպես, ամէն անգամ պարպած մարդիկդ սպաններով: Երեւակայեցէք անգամ մը: Ոդրում, սեխ կամ սմբուկ չէ, որ կը ջարդես: 1948ի «Ցեղասպանութեան Ուխտ» որեւէ թիւի մասին չի խօսիր: Եռկուսաւիդ մէջ 7 հազար մահմետական պօշնաքներու դէմ գործուած սպանդի պատճառաւ սերպ զօրաւար մը ցեղասպանութեն պատիժ ստացաւ:

- ՄԱԿի «Ցեղասպանութեան Ուխտ»ին մէջ 1948էն վերջ պատահած դէպքերո՞ւն է, որ ցեղասպանութիւն անունը կը տրուի, թէ՝ ոչ անկէ առաջուան դէպքերն ալ այս բացատրութեան մէջ կը մտնեն:

- Այս հարցը երկու երեսակ ունի: Արդարեւ, «Թուրքիայ հաշտութեան յանձնաժողով»ը անցեալ ամիսներու ընթացքին դիմած էր միջազգային իրաւական էնսպիրիւի մը: Հայերը իրականութեան մէջ դէմ էին այդ դիմումին, բայց թուրքերը պնդեցին, եւ դիմումը կատարուեցաւ: Կիւնտիւզ Աքբան կը պնդէր, թէ ցեղասպանութիւնը իրաւական տարազ մըն է եւ չի կրնար գործածուիլ 1948ին նախորդող դէպքերու պարագային: Ըստ իրեն կարելի չէր «ցեղասպանութիւն» որակել 1915ին պատահածները: Բայց միջազգային իրաւական էնսպիրիւն անակնկալ պատասխան մը տուաւ: «Անշուշտ որ ցեղասպանութիւն բացատրութիւնը 1948էն առաջ պատահած պատահարներու համար ալ կրնար գործածել, եւ 1915ին պատահածները կը յարմարին ցեղասպանութեան տարազին»: Այստեղ շատ պարզ տրամաբանութիւն մը կայ: Եթէ քաղցկեղի անունը այսօր որոշուեցաւ, հինգ-տասը տարի առաջ քաղցկեղէ մեռած մարդոց համար պիտի չկարենա՞նք ըսել, թէ անոնք մեռած են քաղցկեղի հետեւանքով:


- Միջազգային իրաւագիտութեան սկզբունքներուն համաձայն՝ օրէնքը աւելի առաջուան թուականներուն գործուած յանցանքներուն համար չի գործադրուիր: Այսպիսի սկզբունք մը չկայ:

- Ծիշը է: Եւ ասիկա կարեւոր առարկութիւն մըն է: Դրական իրաւագիտութեան ընդհանուր կանոնն է. օրէնքը անցեալի դէպքերուն համար ի գօրու չէ: Ուստի, ոմանք կրնան պնդէլ, թէ 1948ի ցեղասպանութեան տարազը իրաւական տեսակէտ չի կրնար գործադրուիլ 1915ի մասին: Բայց ասոր դիմաց նոյնքան զօրաւոր ուրիշ առարկութիւն մը կայ: Օրինակ, Նիւրմակէրի դատավարութեան ընթացքին, երբ նացիները կը դատուէին, անոնք կ'ամբաստանուէին ցեղասպանութեան տարազէն աւելի առաջ իրեաներու դէմ իրենց գործադրուած ոճիրներով: Այսինքն, հոն օրէնքը գործադրուեցաւ անցեալի դէպքերուն համար:

- Բանավէճի ընթացքին յաճախ իրարու հետ կը շփորուին «ցեղասպանութիւն», «Ներքին պատերազմ», «տեղահանութիւն» կամ «ապատամբութեան զապում» բառերը: Դուք ի՞նչ կը խորհիք այս մասին:

- Այս բոլորը իրարմէ շատ տարբեր իմաստներ ունին: Միջոց մը ներքին պատերազմի թէզը ստեղծուեցաւ, բայց Թուրքիայ անմիջապէս մէկրի ըրաւ այդ պնդումը: Որքան որ գիտեմ ճամփին Մաք Քարթին էր, որ հնարած էր «Ներքին պատերազմ» բացատրութիւնը: Այս բացատրութիւնը ստեղծուեցաւ պատահած դէպքերուն գիտական բացատրութիւն մը գտնելու նպատակով: Բայց թըրքական կողմը շուտով իրաժարեցաւ այս բառը գործադրուած պատահածի առաջ գործադրուած պատահած պատճառաւ ստացաւ:

# «ԱՂԹԱՍԱՐ» ԵԿԵՂԵՑՈՒ ՔԱՆԴԱԿՆԵՐԸ ՀՐԱԶԳՈՒԹՅԱՆ ԹԻՐԱԿ ԵՆ ԴԱՌՁԵԼ



**«Միլիյեր»-ի թթակից Շյուքրան Բաք-քան Վանից տեղեկացնում է, որ «Աղթամար» եկեղեցու հրաշալի քանդակները թիրախս են դարձել հրածագության վորձների համար: Թերթը հրատարակել է նաև մի լուսակար, որտեղ պատկերացնում է Կառավարութիւնը վերջն է, որ լսեց, թէ ի՞նչեր պատահած էին:**

**- Չատ լաւ, պատասխանատուն ո՞վ է:**  
- Մեր ունեցած աղբիւրներուն համաձայն՝ պատասխանատուն ամբողջովին իթիհատ եւ թէրաքի կուսակցութիւնն է: Կառավարութիւնը բնաւ կապ չունի: Կառավարութիւնը վերջն է, որ լսեց, թէ ի՞նչեր պատահած էին:

**- Իսկ ո՞ր դահիճներուն ձեռքով է, որ իրականացաւ ցեղասպանութիւնը:**  
- Դահիճները «Թէշքիլարը Մահուսէ» կոչուած միաւորներն էին, որոնց թիւը կը հասներ 30 հազարի, նաեւ թիւրտ ցեղախումբեր ու բանտերէն արձակուած ոճրագործներ: Ասոնցմէ դրւս, Պիրիսի, Մարտինի, Սոլերոի ու Վանի շրջաններուն մէջ բանակն ալ հայերը բնաջնջած է՝ առանց զանոնք տեղահանութեան ենթարկելու:

**- Եթէ Թորոնթոյի մէջ թուրք հաւաքականութիւնը աշխատաժողով մը սարքէ, ինու ալ կը խօսի՞ք այս նիթերուն մասին:**

**- Պայմանաւ, որ դիմացս գտնուին մարդիկ, որոնք ունկնդրել ու խօսիլ գիտեն: Ես այսպիսի հաստնութիւն մը չեմ տեսներ մեր մօտ: Մեր հաւաքականութիւնը տարօրինակ է: Չատեր մտածումի քանի մը փշրանքներ լսած են, անոնց վրայ հիմնուելով դիմացիններուն վրայ կը յարձակին ու ատիկա ալ ճարպիկութիւն կը նկատեն:**

**«Մարմարա»  
24. 06. 2004**

**հ**րաքից ստացվող հաղորդագրությունները վկայում են այստեղ ան-իշխանության ու բռնարքների (դրանք երբեք էլ չեն դադարել), կտրուկ ածի մասին: Անգամ ծայրահեղական ուժեր են մտավախություն հայտնում ներքին պատերազմի հնարավոր բռնկման առնչությամբ: Պատերազմի ավարտից 2-3 ամիս անց՝ հունիսի 27-ին Իրաք ժամանած ամերիկացի երեք սենատորները վերադառնալիս հայտարարել էին, թե պատերազմն այնտեղ շարունակվում է, ժամանակն է բնակչությանը հայտնել ճշմարտությունը, մարդիկ պետք է տեղյակ լինեն երկարաժամկետ ֆինանսական պարտավորությունների մասին: Ավելի ուշ Վաշինգտոնը խոստովանեց, որ ԱՄՆ-ն Իրաքում ներքաշվել



## ՀԵՂ ՎԵՐԱՀԱԿՈՒՄ ԻՐԱՎԻՃԱԿԸ

է պարտի-

զանական պատերազմի մեջ (RFI ռադիոկայան, 17-ը հունիսի, 2003թ.): Պատերազմից մեկ տարի անց պաշտպանության նախարար Դնալդ Ռամսֆելդը, ընդունելով, որ Իրաքում ամերիկյան ուժերը լուրջ խնդիրներ ունեն, դրանք հաղթահարելի էր համարել («Ֆարդա» ռադիոկայան, 8-ը ապրիլի, 2004թ.): Իրաքում ամերիկյան ուժերի գլխավոր հրամանատար գեներալ Մեյերսը, Սենատի արտաքին հարցերի կոմիտեում հայտնել էր, թե Միացյալ Նահանգներն Իրաքում ներքեք ռազմական պարտություն չի կրեն, բայց այստեղ անհնասա է նաև ռազմական հաղթանակը (RFI ռադիոկայան, 14-ը մայիսի, 2004թ.):

Այսօր արդեն, ըստ միջազգային ՁԼՍ-ների հաղորդագրությունների, կուալիշիոն ուժերն այլևս գործեք չեն վերահսկում իրավիճակը, «Իրաքի խւամական բանակը» (ԻԻԲ), որը համաձայն արևմտյան աղբյուրների, ներառում է հակազավթողական կողմնորշմանը շուրջ 60 շարժում ու կազմակերպություն, պատահ է վերցնում և ահարելում օտարերկոյա քաղաքացիներին: Տարբեր դրդապատճառներով ԻԻԲ-ի այդօրինակ գործողությունների զի են դարձել իրանցի դիվանագետ Ֆրեյդուն Զահանին (պատամդ) և խտալացի մի լրագրող, որին ազատելու համար Խոտալիայից պահանջվում էր զորքերը դուրս բերել Իրաքից: ԻԻԲ-ն չի խնայում անգամ այն երկրնե-

րի քաղաքացիներին, ովքեր դեմ էին Իրաքի գրավմանը (օրինակ՝ ֆրանսիացի երկու լրագրողների առևանգումը, չնայած այս դեպքի համար ֆրանսիական մամուլը հաճախ մեղադրում է երկրի ժամանակավոր կառավարությանը) և բարեգործական հասարակական կազմակերպությունների (ԴԿ ներկայացուցիչներին (հուալական բարեգործականներից մեկի երկու անդամների): Վերոհիշյալի պատճառով սեպտեմբերի 9-ի դրությամբ այդ երկիրը լեւ են տարբեր երկրների ԿՎ-ները, ամերիկյան «Մարդու իրավունքները դիտարկող» («Յումեն ռայքս վիզ») կազմակերպության ներկայացուցիչն այդ քայլը պատճառաբանել է Իրաքում անվտանգությունը գերադասում են կատարած գործից (RFI-ի ռադիոկայան, 9-ը սեպտեմբերի, 2004թ.): Յավելներ, որ դեռևս ապրիլի սկզբին ընդուն կուալիշիոն ուժերի շիարնակ քաղաքներում ապստամբության և սունիաբնակ եռամկյան («մահվան եռակյունի») մեջ մըտնող Ֆալուջա քաղաքում սունի գրոհայինների ու կուալիշիոն ուժերի միջև ընդհարումների հետևանքով, փաստորեն, նշալ շրջանները դուրս էին եկել Միացյալ Նահանգների վերահսկողությունից. Վերջինիս համար Իրաքում ստեղծվել էր գերձանր վիճակ, որը հաճախ բնութագրվում է իբրև երկրոդ կիետնամ: Այսօր կուալիշիոն ու կառավարական ուժերը ոչ միայն նշալ շրջաններում են ընդհարվում ապօստամբների հետ, այլև ռազմական գոր-

ծողություններ են իրականացնում նաև երկրի հյուսիսում գտնվող Թալաֆար քաղաքում, որի շուրջ 150 հազար բնակչությունը շիա թուրքմեններ են: Այլ կերպ ասած՝ Միացյալ Նահանգների՝ Իրաքում իրավիճակի բնականացման ուղղված միջոցառությունները գործնականում շոշափելի արդյունք չեն արձանագրել: Ավելին՝ ակնհայտ է իրադրության վատրարացման միտումը: Միջինարևելյան վերլուծաբանները, նշելով, որ Միացյալ Նահանգներին չի հաջողվել Իրաքում իրագործել նախատեսված ծրագրերը՝ այնտեղ անվըտանգություն ապահովել և կայունություն հաստատել ընդգծել և ընդգծում են, թե իրականում Վաշինգտոնը պարտություն է կրել այդ երկրում, պարտություն, որը գլխավորապես բացատրվում է նախ այն բանով, որ ԱՄՆ-ն Իրաքում, հանձին Կառավարման խորհրդի (ԿԽ) անդամների, հովանավորել է այն ուժերին, որոնք Իրաքի հասարակության մեջ դիրք և հեղինակություն չունեն (երկիրը չեն ճանաչում, մեծացել են արևմտյան արժեքներով), հենվել է այդ ուժերի (արտերկրյա ընդդիմության) Իրաքի իրականության վերաբերյալ ներկայացրած թյուր պատկերացումների վրա:

Ըստ որոշ տեղեկությունների՝ ԿԽ-ն այժմ Ազգային խորհրդի անդամ (Իրաքի ժամանակավոր օրենսդիր մարմինը) Ահմեդ Զալարիի և Վաշինգտոնի միջև ծագած լուրջ տարածայնությունները բացատրում է հենց այդ հանգանքով: Նա մեղադրվում է ԿՎ-ին՝ Իրաքի վերաբերյալ ոչ ճիշտ տեղեկություններ ներկայացնելու համար: Ի դեպ, Իրաքի բնակչության շուրջ 40

# Իրաքից ստացվող հաղորդագրությունները վկայում են այստեղ անիշխանության ու բռնարքների կտրուկ աճի մասին:



տոկոս անգրագետ է, և այնտեղ քաղաքացիական հասարակության, անհատի իրավունքների մասին խոսք անցամ չի կարող լինել: Սադամյան բռնապետության 35 տարվա ընթացքում բնակչությունը, կրելով տարբեր զրկանքներ, առավելապես մղվել է դեպի հոգևորականությունը, ազգակցական և ցեղակցական կապերի ամրապնդումը: Բացի այդ, առ այսօր այնտեղ գործում են տոհմատիրական փոխհարաբերություններ: Թերևս դրանով է պայմանավորված Իրաքում Կազի ալ-Յավարին նախագահ Նշանակելը, քանզի նա արաբական հեղինակավոր տոհմերից մեկի ցեղապետերից է, որն ավելի քան 3,5 միլիոն անդամ ունի, և որոնց մի զգալի մասն ապրում է արաբական տարբեր երկրներում (RFI ռադիոկայան, 2-ը հուլիսի, 2004թ.): Ահա թե ինչու առաջարկված ամերիկյան ժողովորակարությունը չէր կարող բնակչության իր կողմն գրավել, թեև իրաքցիները ողջունում էին բռնապետության տապալումը:

Իրաքում կուալիֆին ուժերի դեմ պայքարում են իիննականում ա) Սադամի կողմնակիցները, ովքեր կարողացել են վերակազմավորվել, բ) Իրաքում և նրա սահմաններից դուրս գտնվող իսլամ արմատական ուժերը, որոնք բացել են բավական լայն ծակառ: Ամերիկյան 135-150 հազարանոց զորքի ներկայություն Իրաքում, տարբեր երկրների իսլամ արմատականներին, ովքեր նապատակամղված են Իրաքում Միացյալ Նահանգներին պարտության մատնել, այստեղ է բերում: Բացի այդ, հոգևոր առաջնորդները, ովքեր դեկավարում են ուրբարօրյա աղոթքները, Իրաքի ողջ տարածքում կրոնական կառուցյան հակառամներին տրամադրություններ ունեցող հսկայական կազմակերպություն են ձևավորել՝ բացառությամբ քրդարնակ շրջանների: Այլ կերպ ասած՝ Իրաքում ահաբեկչական գործո-

ղությունների և իսլամ արմատականության աննախադեպ աճն ի դերև է համում նաև ԱՄՆ նախագահ Ջորջ Բուչի այն տեսակետը, թե Միջին Արևելքուն ահաբեկչություն ծնող աղբյուրները բռնապետական վարչակարգերն են: Այս միտքը նա հայտնել է սեպտեմբերի 11-ի ահաբեկչության երրորդ տարելիցին նվիրված իր ելույթում, որտեղ մեկ անգամ ևս պաշտպանել է անգլո-ամերիկյան ուժերի հարձակումն Իրաքի վրա՝ «ընդդեմ ահաբեկչության» (RFI ռադիոկայան, 8-ը սեպտեմբերի, 2003թ.): Վկելին ԱՄՆ Կոնգրեսուն սեպտեմբերի 11-ի դեպքերի ուսումնասիրությունների նպատակով ծևավորված հանճանաժողովը, որը, ըստ ֆրանսիական «Լը Մոնդ» օրաթերթի (17-ը հունիսի, 2004թ.), ուսումնասիրել է շորջ մեկ միլիոն տեղեկատվական նյութ և զրոյց է վարել քաղաքական, անվտանգության և ռազմական ոլորտների ավելի քան հազար գործիքների հետ, իր իրապարակած գեկուցագրում շեշտել է, որ որևէ փաստ չի հայտնաբերել Իրաքի բռնակալ Սադամ Հուսեյնի, Ուսամա բեն Լայտենի և սեպտեմբերի 11-ի դեպքերի միջև կապի վերաբերյալ: Մինչդեռ նաև նման կապի առկայությամբ էր Բուչը պատճառաբանում Իրաքի վրա հարձակման անիրաժեշտությունը: Զավելենք, որ Լոնդոնի ռազմավարական ուսումնանիրությունների տրվյալների համաձայն՝ Իրաքի վրա հարձակումից հետո կտրուկ ավելացել է նաև «Ալ Կահիմյահ» կողմանակիցների թիվը: Ավելին՝ փորձագետներից շատերի, այդ թվում՝ ամերիկացի Ահմադ Սադրի կարծիքով, բռնապետական վաչակարգերը որևէ առնչություն չունեն ահաբեկչության հետ, ավելի ճիշտ՝ դրանք դերակատարություն չունեն ահաբեկչության դեմ պայքարում: Նշվածի վառ ապացույցն Իրաքում ստեղծված իրավիճակն է, որի ժամանակավոր Սահմանադրությունը գնա-

հատվում է իրեւ Միջին Արևելքում ամենաժողովրդավարականը (BBC ռադիոկայան, 25-ը մայիսի, 2004թ.):

Այսուհանդերձ, մայիսի 1-ին նախագահ Բուչը իր ամենշաբաթյա ռադիությունը շեշտել է, որ «Կաշինգտոնն Իրաքում իր գործն ավարտին կհասցնի, քանզի ժողովրդավարությունը հաղթելու է», և որ «ԱՄՆ-ը հաստատակամ է այդ հարցում»: Միաժամանակ նա ընդգծել է, որ «ահաբեկչության դեմ պայքարը շարունակվելու է»: Նույն օրը Պետքարտուղարությունը հրապարակեց «ահաբեկչությունը հիվանավորող երկրների վերաբերյալ տարեկան հաշվետվությունը», որտեղ Իրաքը որակվել է իրեւ «ահաբեկչության դեմ պայքարի գլխավոր ճակատ»:

## Պարտադրված արժեքներն անընդունելի են

Ընթացիկ տարվա ապրիլից, երբ Իրաքում իրադրությունը կտրուկ սրբվեց, Վաշինգտոնը մի շարդ միջոցառումներ իրականացրեց՝ իրավիճակի կայունացման ուղղությամբ, այդ թվում՝ Լոնդոնի հետ համատեղ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին ներկայացրին բանաձև-նախագիծ, որով ձեզտում էին Իրաքում կարգուկանոն հաստատելու «գործում» ներքաշել նաև այն երկրներին, որոնք դեմ էին Իրաքի վրա հարձակմանը և այդ կերպ հարցը միջազգայնացնել: Երկար սակարկումներից հետո, ի վերջո, Անվտանգության խորհրդը՝ հունիսի 8-ին միաձայն հաստատել է ներկայացված նախագիծը՝ թերևս ոչ էական փոփոխություններով: Զամանակ դրա՝ հունիսի 30-ին Իրաքում իշխանությունը հանձնվում է ժամանակավոր կառավարությանը, իսկ անվտանգության հարցերով գրադարձելով է Միացյալ Նահանգները՝ գլխավորելով բազմազգ ուժերը: Զո՞ն Նեգրոփոններն ԱՄՆ-ի

նախկին ներկայացուցիչը ՄԱԿ-ում (այժմ՝ այդ երկիր դեսպանն Իրաքում), նշյալ բանաձևի ընդունումը գնահատեց իրու մեծ հաջողություն: Դա համապատասխանում է իրականությանը, որովհետև այդպիսով օրինականացվեց Իրաքի վրա հարձակումը: Իսկ հունիսի 28-ին Իրաքի ամերիկացի դեկավար Փոլ Բրոները, երկրի քաղաքական և վարչական իշխանությունը նախատեսվածից երկու օր շուտ հաձնելով Վարչապետ Այար Ալավի գլխավորած կառավարությանը, հեռացավ այդ երկուց: Փորձագետներն այդորինակ շտապողականությունը պատճառաբանեցին անվտանգության նկատառումներով, թեև Ալավին դա պայմանավորում էր նախարարությունների ծեփակորման ավարտով:

Իսկ այն, որ իշխանության հանձնումը առերես է, վկայում է նաև ժամանակավոր կառավարության կազմը, որտեղ ընդգրկված են ԱՍՍ-ի հովանավորած ուժերի ներկայացուցիչները: Վարչապետ Ալավին երկար տարիներ համագործակցել է ԿՀՎ-ի հետ, այդ պատճառով էլ նրան համարում են իրու վերջինիս ներկայացուցիչն այդ երկուում: Ահա թե ինչու Իրաքի ժամանակավոր կառավարությունը ևս երկուում հեղինակություն չի վայելում, և կուալիֆին ուժերի դեմ պայքարողները պայքարում են նաև կառավարության դեմ: Արդյունքում իշխանության «հանձնումն» իրացիներին ոչ միայն դրական ազդեցություն չունեցավ, այլև խորացրեց ճգնաժամը: Համաձայն ժամանակավոր Սահմանադրության հաջորդ քայլով ժամանակավոր կառավարությունը ձեռնամուխ եղավ Ազգայն խորհրդի ընտրությանը: Դա տեղի ունեցավ ազգային համաժողովի միջոցով, որին մասնակցում էր տարբեր ուժերի և ազգային փոքրամասնությունների ավելի քան հազար ներկայացուցիչ: Այս Ալավին համաժողովի գումարումը գնահատեց իրու ժողովական փոքրամասնությունը հետևող կառավարությունը ձեռնամուխ է եղավ Ազգայն խորհրդի ընտրությանը: Դա տեղի ունեցավ ազգային համաժողովի միջոցով, որին մասնակցում էր տարբեր ուժերի և ազգային փոքրամասնությունների ավելի քան հազար ներկայացուցիչ: Այս Ալավին համաժողովի գումարումը գնահատեց իրու ժողովական առաջին քայլ Ասդամի վարչակարգի խորտակումից հետո, իսկ շիա ապատամների առաջնորդ Մոլթադա Սադրում այն որակեց իրու ամերիկայն համաժողով և ոչ թե ազգային (RFI ռադիոկայան, 10-ը օգոստոսի, 2004թ.):

Օգոստոսի 17-ին համաժողովն ընտրեց Ազգային խորհրդի (որը գործելու է իրու օրենսդիր իշխանությունը և վերահսկելու է կառավարության գործունեությունը) 100 անդամներին, ընդ որում 19-ը նախկին կև անդամներ են: Սեպտեմբերի 1-ին Ազգային խորհրդուղ գումարել է առաջին նիստը և ընտրել նախագահ: Այդ օրն ահաբեկչության թիրախ դարձավ ոչ միայն նիստի գումարման վայրը, այլև Ազգային խորհրդի անդամ Զալաքին՝ նիստի գնալիս: զոհվեցին և վիրավորվեցին նրա թիկնապահները:

Նշյալ միջոցառումներից զատ, իրաբում իրավիճակը շուտափույթ կայունացնելու նպատակով, Վաշինգտոնը նաև նահանջի և փոխգիշման քայլեր է կատարել: Օրինակ՝ ապրիլի վերջին Ֆալուչայի իշխանությունը հանձնվել է Սադամի բանակի գեներալներից մեկին: Փորձագետներից ոմանք դա գնահատեցին իրու իրատեսական քայլ: Այնուհետև օգոստոսի 27-ին Իրաքի շիաների առաջնորդ այարուա Ալի Սիստանի միջնորդությամբ, որը խստ դեմ է օտարեկրյա ուժերի ներկայության իրաքում, համաձայնություն ձեռք բերվեց ժամանակավոր իշխանության, ամերիկյան ուժերի և Սադրի միջն նաջաք քայլաքից (որտեղ շիաների կարստագույն սրբավայրն է), Սադրի ուժերի դուրս բերման վերաբերյալ, քայլ, որն առավելապես գնահատվել է իրու փոխգիշում հանուն ԱՍՍ-ի ռազմավարական շահերի այդ երկրում, քանզի Սիստանին, առանց որոշ արտօնությունների ակնկալիքի, չեր միջնորդելու («Յունանիտ» օրաթերթ, 28-ը օգոստոսի, 2004թ.):

Այսուհանդերձ դրությունն Իրաքում մնում է բարդ, անկայունությունը շարունակվում է, մինչդեռ ԱՍՍ-ում նախագահական ընտրություններին մնացել է շուրջ 50 օր, իսկ Իրաքի խնդիրն այդ հարցում թերևս կենսական նշանակություն ունի Բուշի վերջնտրվելու տեսանկյունից: Ավելի՞ կան տեսակետներ, որոնց համաձայն ի սկզբանե գնամաժմից դուրս գալու վերաբերյալ Վաշինգտոնի մշակած ռազմավարության մեջ հաշվի էն առնվել նախագահական ընտրությունները («Ֆիզարո», 4-ը նոյեմբերի, 2003թ.): Սակայն վերջինիս հազիվ թե հաջողվի այդ ընթացքում իրավիճակը բնականուացնել, ուստի լավագույն դեպքում ջանքերն ուղղված կլինեն իրադրության վատրարացումը կանխելուն, հակառակ դեպքում բացառված չէ, որ Իրաքի «Ժողովրդավարությունը» ճակատագրական դաշնային կառավարության հետևող կատարվությունը կամ չելի ծիշ՝ պարտադրվում այդ արժեքները, քանի որ արմատներ չունեն տվյալ երկրի մշակույթում և ավանդույթներում, դատապարտված են չորանալու: Նոյեմիսկ եթե ճնշման և ուժի գործադրմանը առերևս յուրացվեն, ճնշում գործադրելն ինքնին հակասում է դրանց: Ինչ վերաբերում է Աֆղանստանին և Իրաքին, որտեղ հասարակությունը հաճախ առաջնորդվում է տոհմատիրական փոխհարաբերություններով, առավել ևս անընդունելի են պարտադրվող արժեքները:

Ահավասիկ Աֆղանստանում միջազգային ուժերի առաքելության ձախողումը, քանզի դադարել է «Վերակառնության» գործընթացը, երկրի միասնականությունն առավելապես վրա տանգված է: Նախորդ տարվա համեմատությամբ, ըստ միջազգային ԶԼՄ-ների հաղորդագրությունների, ափինի ցանքատարածությունն աճել է 18 անգամ, իսկ Վաշինգտոնի դրանը Համեր Քյարգայը պատրաստականություն է հայտնել բանակցելու «չափակուրական թալիքների» և իսլամ ծարուահական թերմաթյարի հետ:

տված հարցազրույցում:

Սեպտեմբերի 3-ին ԱՍՍ-ի Հանրապետական կուսակցության համագումարում, որտեղ Բուշը պաշտոնապես հայտարարվեց այդ կուսակցության՝ ԱՍՍ նախագահի թեկնածու, ի պատասխան իր մրցակցի և հակառակորների՝ պաշտպանել է նախագահի պաշտոնում քառամյա գործունեությունը, այդ թվում Աֆղանստանի և Իրաքի վրա հարձակումը՝ շեշտելով, որ այդ կերպ 50 միլիոն աֆղանցիններին ու իրաքիներին ազատություն և ժողովրդավարություն է ընծայել: Նա հավելել է, թե իր որդեգրած նմանօրինակ քաղաքականության հետևանքով այսու աշխարհին ավելի անվտանգ է:


Թեև վերջին առնվազն 1,5 տարվա ընթացքում ԱՍՍ քաղաքականությունը թե՛ Իրաքում և թե՛ Աֆղանստանում կրում է նոյեմբերի 2-ի նախագահական ընտրությունների կնիքը, անգամ հոկտեմբերի 4-ին Աֆղանստանում նախագահական ընտրությունները նշանակելը, երբ դեռևս դրա համար առկա չեն նպատակուր պայմաններ, պայմանավորված է Բուշի նախընտրական քարոզարշավով, այսուհանդերձ այդ երկրների նկատմամբ Միացյալ և ահանգների քաղաքականության բուն նպատակը դրանցում արևմտյան, մասնավորապես՝ ամերիկյան արժեքների՝ «Ժողովրդավարության» տարածումն է (ամերիկանացունը), որն արժանանում է նաև մրցակցից դեմոկրատների հավանությանը: Սակայն անկախ այն բանից, թե ռազմավարական ինչ նպատակներով են ներմուծվում կամ ավելի ծիշ՝ պարտադրվում այդ արժեքները, քանի որ արմատներ չունեն տվյալ երկրի մշակույթում և ավանդույթներում, դատապարտված են չորանալու: Նոյեմիսկ եթե ճնշման և ուժի գործադրմանը առերևս յուրացվեն, ճնշում գործադրելն ինքնին հակասում է դրանց: Ինչ վերաբերում է Աֆղանստանին և Իրաքին, որտեղ հասարակությունը հաճախ առաջնորդվում է տոհմատիրական փոխհարաբերություններով, առավել ևս անընդունելի են պարտադրվող արժեքները:

Ահավասիկ Աֆղանստանում միջազգային ուժերի առաքելության ձախողումը, քանզի դադարել է «Վերակառնության» գործընթացը, երկրի միասնականությունն առավելապես վրա տանգված է: Նախորդ տարվա համեմատությամբ, ըստ միջազգային ԶԼՄ-ների հաղորդագրությունների, ափինի ցանքատարածությունն աճել է 18 անգամ, իսկ Վաշինգտոնի դրանը Համեր Քյարգայը պատրաստականություն է հայտնել բանակցելու «չափակուրական թալիքների» և իսլամ ծարուահական թերմաթյարի հետ:

**Էմմա Բեգիջանյան  
13. 09. 04**

# ԿՐԿՆԱԿԻ ԳԼԽԱՏՎԱԾ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

## Ողբախառն սարկազմ



Ս

կզբում ամենահին ոչ հրետորական հարց՝ պետք է, արդյոք, տիրացուին գուրնան, իսկ մեր նզովյալ ավետյացին՝ գիտությունը: Եվ ոչ միայն գիտությունը: Խնդրեն, ավերեցինք սպորտը, ցուցինք առաջատարներին և, քառամյա «արգասավոր» ընդիշումով, փառահեղորեն տապալեցինք օլիմպիական վերջին երկու խաղերը: Եվ ի՞նչ... Տուժե՞ց որևէ «սրտացավ» նախարար, կամ մեկը դարդից կախվե՞ց: Եվ չարծե՞լ... Եթե ինչ-որ կռվարարի «ուսուում» է մեկ ուրիշի մոռուքը **մարդամիջում** (որնգում) «նախշելու» մաղքը, ապա մեզ մոտ սրանց համար ստեղծված են օրենքով պաշտպանված անսահմանափակ հնարավորություններ՝ հանրահավաքներուն կամ, ասենք, «վաստակել» են անտառային «խըրճիք-տների» «պահակի» կարգավիճակ: Վերջին դեպքում պարտադիր են մարմնի վերին սափրօած «կոշտուկը»՝ գլուխը, ուսերի լայնության վիզը և ցուլի «նրբանկատությունը»: Իսկ եթե չնահավան որևէ կռվարարի դա դուր չի գալիս, թող **ռադը քաշի** որևէ **գյոյլամոլիս** և այնտեղ զբաղվի մոռուների քաղաքակիրը «մշակմաբ»: Եվ կատ չի լինի, եթե իրենց հետ տանեն **բեռնակիր-շտամպիստ-**

ուրեմն, թող Եվրոպայի ու Մոսկվայի «կախականցներին» իհացմի: Մեր նրբաճաշակ «ազգընտիր» «ջոշերը» նման էժան խայծ կուլ տվողը չեն: «Պողիկոտոսով» Եվրոպան հիացրած Տիգրան Լևոնյանին հասցրինք գերեզման... Ճետո՞ ինչ. ո՞ւր է թողոքի համաժողովողական ցասումը: Չըկա՞... Ուրեմն ժողովուրդը համամիտ է. դասական «ձանձրաքնիրի» և ժողովոդական «կուսամիամիտ» ու ջինջ «մելոսի» փոխարեն բացօրյա անթիվ սրճարաններից և փակ կազինոներից մինչև գիշերվա երկուսը, երբեմն՝ մինչև լուս, որոտածայն նվազակցությամբ, ստամբուլ խորքի ելնող նկոցով գուզա են տալիս ու զիգայր քրորում երկարածիզ մուհամները և շուկայածին ինքնուսների «գլուխգործոցները»: Այդ կակաֆոնիայի դեմ գուր են թողոքում շրջակա շենքերի դիվահարվող ու դանդաղ խելագարվող, զգայուն նյարդերի տեր «նրբիկները», քանզի անգամ բացօրյա սրճարաններն ունեն հուսալի «տանիքներ»:

Գիտությունն էլ պակասը չէ: Մինչ օրս ո՞չ գերզենք, ո՞չ էլ գոնե մի քննօտու հավերժական շարժիչ: Խոսքները մեկ են արել. «Գերզենքը միայն գերպետություններին է հասու, իսկ հավերժական շարժիչը, կներեք, ան-

*«Պոնեյ ե բայտքր քայլում Հևտոնամ քամու ժամանակը դաստիարակությունը...»*

**Սալտիկօվ Շեօքին**  
**(«Կասմզի սանձահարել արագամիտ Նևտոնների\* բազմացումը...»)**  
**Սալտիկօվ Շեօքին**

ինար է սկզբունքորեն»: Այս, անհընա՞ր է... Այդ դեպքում ինչների՞ս է պետք հավերժ մուրացող այդ ծրիակերների բանակը: Բարի եղեք մատուցել նրանց ժամանակակից բանկարժեք սարդավորումներ: Ո՞նց չէ: Գայլիեր ակնոցից բացի ոչինչ չուներ: Մարդը հեռադիտակ մոգունեց ու սկսեց «գիտություն անել», դրա համար էլ հայտնվեց բանտախցում: Մենք ինկվիզիտորներ չենք, խարույկի վրա չենք այդի, բանտախուց չենք խցկի: Բայց **պատամի նյուտոններին** բազմանալ թույլ չենք տա: Պարզապես շատ են, իսկ պիտի լինեն քիչ: Ուստի...

**Թալան N1:** 1990-ական թվականների սկիզբ: Մի քանի երանեկի խանդապարներ (տողերիս հեղինակը՝ նրանց թվում), նորարարության բացված հնարավորություններով և նորարուիս առաջնօրդների առաքինության նկատմամբ անսասան հավատով թև առած, առաջարկեցին բյուջեից գիտությանը տրամադրվող գումարի 15 տոկոսը հատկացնել առանձին փոքր թեմաների ֆինանսավորմանը՝ երիտասարդ գիտնականների ստեղծագործական նախաձեռնությունը խթանելու նպատակով: Անիծվեր և այդ օրը, և այդ նորարարական «քռույ»: Ուրախությունը երկար չտևեց: Մի երկու տարի անց սպորտից, մշակույթից, կրթությունից հետո հերթը հասավ գիտությանը: Մեփականաշնորհումը, այսինքն՝ թալանը ու փլուզումը, և որպես հետևանք՝ ողջ տնտեսության լճացումը, նոր ֆինանսական ներարկումների պահանջ առաջացրին: Յորաշալի է: Գիտությունը ֆինանսավորվում է երկու հոդվածով. բազայինը՝ 85 տոկոս և երիցս «օրինյալ» թեմատիկը՝ 15: Բարի... Քանեցին բազայինը՝ մեծահոգարար պահպանելով միայն 15 տոկոսանց թեմատիկը: Նաև որպես հետևանք, ինստիտուտների պահանջ առաջացրին: Յորաշալի է: Գիտությունը ֆինանսավորվում է երկու հոդվածով. բազայինը՝ 85 տոկոս և երիցս «օրինյալ» թեմատիկը՝ 15: Բարի... Քանեցին բազայինը՝ մեծահոգարար պահպանելով միայն 15 տոկոսանց թեմատիկը: Նաև որպես հետևանք, ինստիտուտների պահանջ առաջացրին: Յորաշալի է: Գիտությունը ֆինանսավորվում է երկու հոդվածով. բազայինը՝ 85 տոկոս և երիցս «օրինյալ» թեմատիկը՝ 15: Բարի... Քանեցին բազայինը՝ մեծահոգարար պահպանելով միայն 15 տոկոսանց թեմատիկը: Նաև որպես հետևանք, ինստիտուտների պահանջ առաջացրին: Յորաշալի է: Գիտությունը ֆինանսավորվում է երկու հոդվածով. բազայինը՝ 85 տոկոս և երիցս «օրինյալ» թեմատիկը՝ 15: Բարի... Քանեցին բազայինը՝ մեծահոգարար պահպանելով միայն 15 տոկոսանց թեմատիկը: Նաև որպես հետևանք, ինստիտուտների պահանջ առաջացրին: Յորաշալի է: Գիտությունը ֆինանսավորվում է երկու հոդվածով. բազայինը՝ 85 տոկոս և երիցս «օրինյալ» թեմատիկը՝ 15: Բարի...

(թեմատիկի գումարը տնօրինում է մրցույթում հաղթած թեմայի դեկավարը): Վզակորին հասցած այդ «փաղաքանքի» հետևանքով գիտությունը կորցրեց ֆինանսավորման էական մասը:

Ի՞նչ եք կարծում, ո՞ւմ է մինչ օրս վիճուպում գիտական հասարակությունը... Առաջին նախագահի թիկնազորի՞ն... Ամենակին... Զավե՛շու... Ասես հավկուրության անհայտ տեսակով ախտահարված՝ բոլորը նախանձելի անառարկելիությամբ նզովում են վայ-նորարարներին (>): Միաժամանակ իշխանավորների դժգոհությունն է առաջացնում հատկապես ժամկետամց նյուտոնների զայրացուցիչ կենսունակությունը: 16 հազար դրամանոց «աստղաբաշխական» ռոճիկով «Երջանկացած» այդ «կոստոշավորները» ծվաբել են իրենց միջնադարյան լաբորատորիաներում ու ինչ-որ բան են բզբգում: Թվում եր վաղուց պիտի մոռացած լինեին շունչը փշած բազայինը: Բայց ո՞չ: **Զահլա են տաճում** իրենց նվճագուշով: Դե լավ... մեղքը ծեր վիզը. ավարտենք այն, ինչը չիաջողվեց առաջին թիկնազորին՝ հասցնե՞նք դրանց կոտոշներին...

Եվ ահա ս.թ. ապրիլի մեկին, սակայն ամենակին ոչ որպես ապրիլմեկան **ծեռառնոցի**, բարբառեցին՝ կեն-



ամսվա 20-րդ օրը: Եվ երե ֆինանսների նախարարությունը ուշացրել է աշխատավարձի փոխանցումը (ասենք պետք է պտտեցնել դրամները հերթական վեզիրի առատաձեռնությամբ խաղատանը թողած դումա..., ներողություն, գումարը՝ բյուջե վերադարձնելու համար), ապա տուգանքը վճարում է... տարարախտ գիտահետազոտական ինստիտուտը (կեցցե՛ք Աժ-ն ընդունած ինաստուն օրենքի համար):

Սակայն դա էլ չօգնեց, նվճագում ու ծռություն են, բայց արի ու տես՝ շնչում են... Ախ, այդպե՞ս...

**Թալան N2:** Մտիր պայծառացումը երկրորդ թիկնազորի մոտ վրա հասավ «մեղիտացին» ոչ տևական ճգնումի հետևանքով (անշուշտ՝ ոչ մենաստանում): Բազայի՞նն եք ուղում, խնդրեմ, ստացեք. վերանվանել այսօրվա թեմատիկ ֆինանսավորումը բազային՝ նախապես այն կրծատելով 40 տոկոսով և միջին աշխատավարձը 16 հազար դրամից բարձրացնել 27 հազարի: Բանի որ սպասարկող անձնակազմի կրծատումն արդեն հասել է իր սահմանագծին, դա փաստացի նշանակում է գիտաշխատողների եղած թվաքանակի կրկնակի կրծատում: Կերա՞ք... Երկու թալանների հաղթական գումար-արդյունքը գիտության ֆինանսավորման տասնապատիկ կրծատումն է: Լուր տարածեցին իբր թեկնածուներին ու դրկտորներին տրվելու է «հերթաբային» հավելավճար՝ 5 և 10 հազար դրամ համապատասխանաբար: Առայժմ լուր են: Իսկ երիտասարդ, **հեռանկարային նյուտոնները**, հետևելով բռնցքամատիկնե-

րին, տրտում ու գլխիկոր սփռվում են աշխարհով մեկ...

**Վերջաբանի փոխարեն:** Ժամանակին վիրտուալ (ինչպես բաց թողնեմ մոդայիկ բառով փայլելու արիթր) Վասիլի Իվանովիչին են վերագրուել «սոցիալստական դրախտի» ուրույն պատկերացումը. «Կկառուցենք, Պետենկա, կոնսերվատորիաներ, որ երեխաները կուշտ փորով կոնսերվաներ (պահածոներ - խմբ.) ուտեն, իսկ եք վորհկները խանգարվեն, օրսերվատորիաներ (աստղադիտարաններ - խմբ.) կկառուցենք (նրա հանոգմամբ վերջիններում լուծն են բուժում - Ո. Ղ.): Գիշերային խաղա- և զվարճատների սրնկաբնույթ բազմացումը, որոնցում **հայրենանպաստ** զվարճանում են սփյուռքացիք ու **նորարույժ հաստաքսակները**, ակամա մտածում են, որ մեր բարերար հայրերը մտածում են Վասիլի Իվանովիչի կատեգորիաներով: Յուսանք, որ նրանց համար, ում փորհկները կխանգարվեն կամ մեկ այլ բան, կկառուցվեն վեճ- և ԶԻԱՇ (AIDS) «սթափարաններ»: Ու բոլորովին չարժե զվացավ ու անքնություն վաստակել՝ տանջվելով այն մտքից, թե ինչպիսի հայաստանում են ապրելու և այն գովերգելու մեր սերունդները:

Ավարտելով՝ ավելացնեմ .....( ):

**3. Գ. - Dixi et animam levavi, այսինքն՝ ասացի ու հոգի թերևացրի:**

**Ուժայել Ղազարյան  
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս**

\* Նյուտոններ

սաթոշակային ֆոնդին հատկացվելիք ողջ գումարը պահել ոչ միայն լրիվ, այլև կես ու քառորդ դրույթներից: Ասենք՝ ռոճիկը 4 հազար դրամ է, իսկ կենսաթոշակայինի պահումը՝ 5 հազար: Դա նշանակում է «արտամընդել» գիտահետազոտական ինստիտուտներից այն համառներին, ովքեր, հանուն գիտության հետ իրենց կապերի պահպանման, համաձայն են այդ խորհրդանշական ողորմությանը: Ավելին՝ կենսաթոշակային հատկացուները պետք է փոխանցվեն ֆոնդ ոչ ուշ, քան յուրաքանչյուր

# ՍԱԿԱՎ ԷՒՍ ՆՐԱՆՔ, ՈՎՔԵՐ ԳԱՂԱՓԱՐԻ ԶԻՆՎՈՐՆԵՐ

Զրույց՝ «Կարին» ազգագրական և  
«Ծովակ» մանկապատանեկան խմբերի  
հիմնադիր և գեղարվեստական ղեկավար,  
«Մահապարտների» գումարտակի  
Հ հատուկ կործանիչ դասակի անդամ  
Գագիկ Գինոյանի հետ



- **Պատմեք, խնդրեմ, Ձեր արմատների մասին:**

- Տնիմիկ կարնեցու ժառանգ են: Պապերս երգումից վերապրած, Ախալցխայում հաստատված հայեր են: Յայցի դաստիարակությունը ժառանգել են ին ծնողներից: Եվ պապս, և հայրս հրաշալի տիրապետում էին նարեմատիկային. նրանցից էլ ժառանգել են այդ ընդունակությունները: Ին պապից հատկապես ժառանգել են պարելու ձիրքը: Ախալցխայում նա բավական ճանաչված պարող և երգասաց է եղել, նաև՝ դիոլահար: Պապիս 11 թոռներից միակ պարողը են են:

- Բայց Դուք ժամանակին ոչ թե պարարվեստի ուսումնարան ընդունվեցիք, այլ պոլիտեխնիկական ինստիտուտ (այժմ՝ ճարտարագիտական համալսարան):

- Պոլիտեխնիկականում (կիրեննետիկայի ֆակուլտետում) սովորելուն զուգընթաց մասնակցում էի երջանկահիշատակ Յայրիկ Մուրադյանի «Վան» ազգագրական խմբին, որը գործում էր մեր ինստիտուտում: «Ազատագրական բանակի» իրամանատար, ցավոք, արդեն հանգուցյալ դարձած Լեռնիդ Ազգալյանի զինակիցներից մեկը բավական տպավորիչ է արտահայտվել իր հրամանատարի մասին. «Նա միայնակ ավելի շատ ազգի զինվոր է դաստիարակել, քան մի քանի ռազմական ուսումնարան՝ միասին»: Նույնը կատեմ Յայրիկ Մուրադյանի մասին. նա ամելի շատ և ավելի լուրջ ազգագրագետներ, պարուսույցներ, երգասացներ է դաստիարակել, քան մի քանի ուսումնարան՝ միասին վերցրած:

Ըստ իս՝ ես Յայրիկ Մուրադյանի մոտ անցել եմ ավելի լուրջ և ամենակարևոր դպրոցը՝ հավատարիմ մնալ ազգային անաղարտ արվեստին:

## - Փաստորեն


բարձրագույն կրթություն ստանալուց հետո կարծ ժամանակ աշխատեցիք մասնագիտությամբ: Ի՞նչ «դպրոց» անցաք մինչև Արցախի ազգագրական կրիվներին մասնակցելու:

- Ավարտելուց հետո չորս տարի աշխատել եմ Երևանի ֆիզիկայի ինստիտուտում՝ որպես կիրեննետիկ-ինժեներ (ավագ գիտաշխատող էի): Իսկ երբ սկսվեց Արցախի ազգատաճարություն, մեր փոքրիկ լաբորատորիայում սկզբուն փորձեցինք գենք արտադրել:

ճակատագրական մի հանդիպում էլ մեծ ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանի նույնանուն քոռան հետ էր այդ ինստիտուտում: Նրա մեջ տեսնելով ինձ համար շատ ընդունելի և այնքան երանելի մարդկային ու ազգային հատկանիշներ, հավատալով ու վստահելով նրան՝ հասկացա, որ ես այդուհետ իրավունք չունեմ զբաղվելու սույն գիտությամբ, որ գուցե թե այդ առումով իմ գործունեությունն առավել անհրաժեշտ է Արցախում, քան լաբորատորիայի փորձարարական սարքավորումների ետևում:

## - Ի՞նչ «համալսարան» անցաք Արցախում:

- Մի քանի գիտաշխատողներով, որոնց մեջ գիտաստիճան չունեցող միայն ես էի, ընդգրկվեցինք «Մահապարտների» գումարտակում: Կատարում էինք իհամ հատուկ նշանակության աշխատանքներ: Փորձեցինք ապացուել, որ հայոց բանակը բանվորագյուղացիական չէ. այն պետք է լինի եթե ոչ մտավորականներից բաղկացած, գոնե մտավորականների դեկավարած բանակ: Փորձեցինք հայ գյուղացուն, հայ զինվորին ցույց տալ, որ այդ պայքարում իրենք մենակ չեն, որ մտավորականները, հանձին Լեռնիդ Ազգալյանի, իրենց կողքին են, առաջնորդում են իրենց, նաև՝ արյուն թափում, և, որ ամենակարևորն է, նրանց մեջ այդ հավատն այնքան հզորացավ, որ նրանք ավելի վերարժներեցին իրենց կրիվը և հասկացան, համոզվեցին, որ եթե գիտնականները, մի կողմ թողնելով իրենց գիտական կոչումներն ու գործը, հասել են մարտի դաշտ և արյուն են թափում, իրենց հետ հավասար կրում այդ լուրջը, ճիշտ են արել, որ իրենք և եկել են Արցախ: Այսինքն՝ Երկնչողների թիվը նվազեց: Յասկացան, որ մարտի դաշտում հավասարապես զինվորներ են և գիտնականը, և գյուղացին: Ցավոք, այսօր մեր քանակում շատ քիչ են իրոք մտավորականները, նրանք, ովքեր մտածում են զինվորի մասին՝ ազգային նտավորականի պես և քարոզում են ազգային գաղափարախոսություն...



- Մարտի դաշտում հակառակորդի երկու տանկ եք ոչնչացրել: Դա ի՞նչ ազդեցություն ունեցավ Ձեր մարտական ընկերների տրամադրության և հետագա գործունեության վրա:

- Շատ սակավաթիվ էին գաղափարականները: Ոչ մեկին չնսեմացնելու համար ասեմ, որ կան մարդիկ, ովքեր իրոք ազգային, մաքուր գգացմունքներից մովելով էին հասել մարտի դաշտ: Ցավոք, կային նաև հետին նկատառումներով եկածներ: Նույնիսկ նրանք, ովքեր եկել էին, ազգային ալիքի պոռքկումի վրա շատ ավելի մեծ ոգևորություն ապրեցին, քան մենք, որովհետև ռազմակատի այդ հատվածում առաջին անգամ տանկ ոչնչացվեց: Դա կրկնակի, գուցեն բազմակի լիցք հաղորդեց մարտիկներին, հասկացան, որ չպետք է խուսափել տանկից, չարժե տանկից փախչել...

Չգարմանաք՝ ես ոչ մի էական գգացում չունեցա: հավանաբար, լարվածության և արդեն բազում ընկերներ կորցնելու պատճառով: Կարելի է ասել՝ այդ պահին ժամանակ չկար մտածելու: Բայց երկրորդ տանկը շատ ավելի լարված իրավիճակում խփեցի: Այս արդեն կրակում էր մեր խրամատի ուղղությամբ, որտեղ 5-6 հոգով պատրսպարված էինք: Մի ներքին վախ կար մեր մեջ, որ հաջորդ թիրախը մենք ենք լինելու: Այդ պահին պետք էր հստակ կողմնորոշվել և վերջնական վճիռ կայացնել՝ կամ՝ ես, կամ՝ նա: Հասկանալով, որ պատսպարվելն այլևս անհնաստ է, պետք է գործել, դուրս եկա խրամատից և կրակցի տանկի վրա: Ուր վայրկանում, որի ընթացքում հրթիռ պետք է հասներ տանկին, վերիիշեցի իմ կյանքի բոլոր կարևոր դրվագները և «Վերադարձա» պայքանից հետո: Մի տեսակ չէի հավատում, կարծում էի, որ ավելի շուտ տանկը կոչնչացնի մեզ, քան ես՝ իրեն: Տարիներ անց, տեսնելով տանկի նկարը, իմ ընկերներից մեկն ասաց՝ շատ խորիդանշական է՝ տանկի մեջ մոշ է աճել: Սարկազմով փոխադարձեցի՝ կամ պետք է տանկի մեջ աճեր, կամ ինձ վրա: Այսինքն՝ այդ պահը շատ օրիասական էր, և առավել հասկացա ու գգացի տանկը ոչնչացնելու կարևորությունը:

- Զինադադարից բավական ժամանակ է անցել: Հավանաբար առիթներ եք ունեցել խորհելու ռազմական այդ գործողությունների մասին: Իսկ առիթ ունեցե՞լ եք շրջելու Ձեր մարտնչած վայրերում:

- Մեկ անգամ գնացել եմ Գանձասար՝ մեր մղած ռազմական գործողությունների հետքերով: Վերջերս ընկերներս հնարավորություն ընձեռեցին կրկին վերադարձնալ այդ վայրերը՝ Սարսանգի ջրամբար, որի մատուցներում կրվել ենք, Չղդրան գյուղ, որտեղ ոչնչացրել են այդ տանկերը, քարվաճար, որի ազատագրմանը մասնակցել է նաև մեր ջոկատը և շատ այլ վայրեր: Այսինքն՝ հնարավորություն եղավ շրջել Արցախում և մի ոչ ավելորդ անգամ վերագնահատել Արցախի գեղեցկությունը արվեստագետի աչքերով, ոչ թե գինվորի: Արցախը մեր հարստությունն է: Ես նորովի տեսա, թե ինչ ենք վերագտել և երբեք, ոչ մի դեպքում, ոչ մի պայմանով, փոխադարձ ոչ մի շահադիտական նկրտումով այդ հողերը վերադարձնելու իրավունք չունենք: Առավել ևս Լեռնիդի, Մոնթե, Թաթուլի (որի հետ բախստ եմ ունեցել մեկ տարի պարել), Մովսես Գեղրգիսյանի և մյուսների արյամբ վերազատագրված հողերը չի կարելի վերադարձնել: Երբեք:

- Մարտական հիշողություններից վերադարձնանք բնամահարթակ, որի վրա սիրում եք և պարել, և պարել սովորեցնել: Արյո՞ք շատ սիսալված կլինեմ, եթե ասեմ՝ պարը Ձեր կը լուսն է:

- Երբ սկսեցի պարել Հայրիկ Մուլադյանի խմբում, մի քանի ամսվա ընթացքում սովորեցի բոլոր այն պարերը,

մյուսները դրանք յուրացրել էին մի քանի տարվա ընթացքում...

- Չունենալով համապատասխան կրթություն...

- Բայց ունենալով համապատասխան գեներ: Այս ժամանակ պարն ինձ համար կոչում չեմ, այլ ընդամենը հածույք: Եվ երբ այդ ամենը վերագնահատվեց, վերաթեքավորվեց որպես ազգային գաղափարախոսության և հայապահպանության բաղկացուցիչ մաս, այդ ժամանակվանից պարը դարձավ շատ ավելի լուրջ զբաղմունք, գուցե՝ ճակատագիր: Քանի դեռ չեմ հասկացել պարի կարևորությունը ազգային խնդրում, դա ընդամենը պար էր, ինչպես շատ շատերի համար ունեն է, ստեղծ և այլն. մարդիկ ուղղակի պարում են, որպեսզի իրենց զգացմունքներն ու տրամադրությունը վերարտադրեն շարժումների միջոցով:

Մեր պարերն առնվազն երկու հազար տարվա պատմություն ունեն: ոչ այն պարերը, որոնք շատ հաճախ տեսնում ենք էկրաններին՝ կապույտ եթերից, որտեղ ահավոր շատ են օտար տարրերը...

- Հաճախ երաժշտությունը մերը չէ:

- Նույնիսկ դիով ութմը տարբեր է:

- Ուոք պարել եք նաև Մարտ Մուլադյանի դեկավարած «Ակունք» խմբում և զբաղվել եք բանահավաքչությամբ: Որը որի՞ն է հերթագայել:

- Հայրիկ Մուլադյանը վատառողջ էր, երբ «Վանի» մի փոքր կազմով տեղափոխվեցինք «Ակունք»: Յետազյում, երբ հնարավորություն ստեղծվեց վերականգնելու եղանակի պարերը, որոնք այսօր այսօր յշ-ում գրեթե չեն պա-



րում, ես ինձ պարտավորված զգացի զբաղվելու այդ պարերի ճակատագրով: Էրգորումցիների համահավաք բնակավայրերը Զավախը, Ախալցխան և Ծակայի շրջաններն են: Այդ երկրամասը ոչ միայն դուրս է մնացել յշ-ից, այլև ինչ-որ տեղ նաև օտարացել է մեր արվեստագետների համար: Միակ մասնագետը, որը փորձել էր նրանց պարերը գրառել, ազգագրագետ Տենյա Խաչատրյանն է, որի մոտ ես սկսեցի սովորել պարային կինետոգրամանը՝ պարերի գրառման ձևերը:

- Քանի՞ նմուշ եք գրառել երգումի պարերից:

- Ծուրց երեսուն, որից առնվազն տասը մեր խմբի պարացանկում է: 2003թ. դեկտեմբերի 5-ին Երևանում մեր անդրամասի մենահամերգում (Ախալցխայում յոթ մենահամերգ ենք ունեցել) դրանց մեծ մասը ցուցադրեցինք:

- Ուոք զբաղվում եք նաև Կոմիտասի գրառած պարերի վերծանությամբ: Ի՞նչ պարեր են դրանք, որտե՞ղ է այդ ամենը գրառել:

- Ցավոք, այդ աշխատանքը բավական ծգծպեց՝ ոչ իմ մեղքով: Պարային մասը վերծանված է: Յստակ է պարերից երկուսի երաժշտությունը: Կոմիտասը գրառել է չորս

հազար երգ և ընդամենը ութ պար (բոլորն էլ Ապարանի շրջանում): Այդ պարերը հարսանյաց ծեսի բաղկացուցիչ մասն են: Չեռագիրն անասելի բարդ է: Կոմիտասը գրառել է հարսանելիան ինը երգ, որոնք այդ պարերի հետ ամբողջացնում են հարսանյաց ծեսը: Ուզում եմ՝ այդ պարերը վերջնական տեսքի բերվեն իրենց երաժշտությամբ, հետո միայն բեմադրենք: Ոչ հեռավոր ապագայում հավանաբար այդ ամենը կներկայացնենք հանդիսատեսին:

- Պարի մասին Զեր մի խոստովանություն գրավել է իմ ուշադրությունը. «Կերպին տարիներին սկսել եմ ավելի գիտականորեն ուսումնասիրել ազգային պարը»: Բացատրեք Զեր միտքը՝ մեկ հավելմամբ: «Գոլոս Արմենիի» թերթին տված հարցագրույցում մտավախություն էիք հայտնել, որ ազգային պարը վաղը գուցե կդառնա «գրաբար»:

- Երկինաստություն կա վերջին արտահայտության մեջ: Ըստ իս՝ գրաբարը շատ ավելի գեղեցիկ լեզու է, քան աշխարհաբարը: Ցավոք, այն միայն մասնագետներն են հասկանում: Ավելին՝ դա ներ մասնագիտություն է: Այսօր, ցավոք, պարագետների մեջ էլ հայկական պարի գիտակների թիվը խիստ սահմանափակ է, այդ պատճառով հայ ազգային պարը միտում ունի «գրաբար» դառնալու: Ի տարբերություն մյուս խմբերի՝ յուրաքանչյուր պար սովորելուց առաջ մեր սանը լսում է այդ պարի նախապատմությունը, անվանման մեկնաբանությունը, ծագումնաբանությունը, աշխարհագործությունը, ծեսի ո՞ր մասն է կազմել, ինչո՞ւ են պարել այն, ի՞նչ խորհուրդ է ունեցել, որպեսզի պարողն ինքը հասկանա՝ ի՞նչ է կատարելու և ինչպէ՞ս: Պարը պետք է մեկնաբանվի, պարը պետք է նարսվի: Պարն ինքնանպատակ չէ, և եթե «Էջմիածին» պարելիս հոգևոր մաքրության չես հասնում կամ «Յարխուչտա» պարելիս ոգեղենություն չես ստանում ու պատրաստ չես մարտի գնալ, կամ «Խշանապարհ» հետո իշխանակերպությունը չի մտնում քո մեջ, անհմաստ է պարելը:

- Ի՞նչ տարբերություն կա ազգագրական և ժողովրդական պարերի միջև:

- Տարբերությունը բենականացնան մեջ է: Ազգագրական պարը չունի բենականացում: Այդ պարը հանդիսատեսի համար չեն պարել: Իսկ ժողովրդական պարը պետք է ներկայացվի ժողովրդին մշակված, բեմին հարմարեցված, պարային շարժումները պահպանած: Շարժումների մեջ է պարի գաղափարախոսությունը: Կոմիտասի բառերով ասած՝ պարը միակ արվեստն է, որն աղդում է ենթագիտակցությամբ վրա: Եվ եթե կարողանա մարդուն հասցնել այն վիճակին, որ ինքը կատարի այդ շարժումները, որոշ ժամանակ այդ պարը պարելուց հետո, եթե անգամ ինքը չհասկանա, ենթագիտակցորեն կընդունի այդ կերպը:

- Զգիտեն ով, բայց պատկերավոր է ասել՝ «Զեռքերը պարի աչքերն են»: Իսկ ոսքե՞րը...

- Համաձայն չեմ: Պարի աչքը նախ և առաջ հոգին է: Կարելի է ասել՝ պարի աչքերը նաև ոտքերն են: Զեռքերն ընդամենը օժանդակող դեր ունեն: Առաջին հերթին հոգին է պարում: Ըստ իս՝ հայկական պարի մեջ հատկապես ոտքերը շատ ավելի կարևոր են, քան ձեռքերը: Մեր նորորյա վերաբարձումների, մեկնաբանությունների մեջ գուցե շատ տեղ է տրվում ոտքերին, բայց կրկին պիտի հիշեմ Կոմիտասին. «Ազգային պարի հիմքը զիստային շարժումներն են»: Առանց պարային զապանակների, որոնք ոտքերով են կատարվում, անհմաստ է ազգային պարը: Առանց զապանակների հայկական պար գոյություն չունի: Հայկական պարի ամբողջ խորհուրդը զապանակներն են, որի ամենամեծ խորհուրդը դեպի վեր, դեպի Աստված ծըգտումն է: Հայկական պարը պարում են միայն բարերի

վրա:

- Դուք մի ժամանակ մտադրություն ունեիք ստեղծել ազգագրության թատրոն:

- ՀՅ-ում այնքան բարդ է ստեղծելը, արարելը... Այդ մտքից չենք հրաժարվում: Առաջին սցենարն արդեն կա. դժվարություններ կան ֆինանսական առումով: Դեկտեմբերի 5-ին մենք փորձեցինք ներկայացնել ազգագրության թատրոնի փորձ. ոչ լիարժեք այն սցենարով, որ ուզում էինք ներկայացնել (վերջինիս համար անհրաժեշտ են բեմիրեր, նկարներ և այլն): Այստեղ չկար հաղորդավար. խոսքը, երգը և պարը հաջորդում էին միմյանց: Անենակարևոր այն է, որ հանդիսատեսը չկարողանա հոգեպես դուրս գալ այդ ներկայացումից: Այն պիտի ունենա սկիզբ, զարգացում, ավարտ:

- Գեղարվեստական գործի կառուցվածքը լավ եք պատկերացնում: Դա, հավանաբար, այն պատճառով, որ նաև գրում եք:

- Զգիտեմ՝ որքանով լուրջ գրող են: Գրում են այն, ինչ զգում են: Պարն ստիպեց գրել: Աֆորդիզմներ էին: Առաջին գրավոր խոսքը, որ տպագրեցի մանուլում, Լեոնիդ Ագգալյանի մասին էր: Նրա մասին չգրել չէի կարող...

Իմ առաջին գրական փորձը նվիրված էր պարի այսօրվա ոչ բարվող վիճակին. խոհեր են՝ ինչ կերպ կարելի է հայկական պարը վերադարձնել ժողովրդին: Այսօր շատ պարային խմբեր կան: Եվ եթե անգամ բոլորը ճիշտ պարեն, միևնույն է, ազգային պար չի կարելի անվանել, քանի դեռ դա չի պարում անբողջ ժողովրդոց: Այսինքն՝ եթե ժողովրդը իր խնջույքներում, հարսանիքներում, մյուս ծեսերում չի պարում իր ազգային պարը, այդ պարն ազգային համարվել չի կարող...

- Դուք նաև գրական մրցանակ եք ստացել:

- Ինձ համար ամենանկանատեսելին այդ մրցանակն էր: Ես առհասարակ չի ուզում մասնակցել մրցության: Ավ. Խահակյանի անվան երիտասարդ ստեղծագործողների գրական և երաժշտական մրցույթ էր: Իմ ընկերների «Ճնշմամբ» մասնակցեցի առաջինին և զարմանալիորեն առաջին մրցանակ ստացա: Բայց ես գրող չեմ, իսկ եթե գրիչ եմ վերցնում, միայն հոգու ճիշ, հոգու ցավ արտահայտելու համար: Երբեմն ինձ «քրնում» եմ այն պահերին, երբ նոր, պատկերավոր ձևակերպում եմ գրել:

- Արվեստագետոր, մտավորականն առհասարակ, առանց լուրջ, ձևավորված աշխարհայացքի չի կարող գործել:



- Ցավիք, այսօր մտավորականության մի ստվար մասն էլ չունի այն գաղափարախոսությունը, որը հարիր է փոքր ազգին: Իմ ամբողջ աշխատանքի հիմքը, ապրելու նախատակը հետևյալն է՝ ծառայել ազգին, օգտակար լինել նրան: Ըստ իս՝ մարդու կյանքը պետք է նման լինի բռնկման, մարդը պետք է մշտական ինքնայրման ենթարկվի, որպեսզի դեպի իրեն եկողները չխարիսափեն: Ազգային գաղափարախոսությունը պետք է լինի ամեն ինչի հիմքը. համամարդկային գաղափարների հիմքում էլ ազգայինն է: Եթե մարդը չի զգում իր ազգային արմատներն ու ոգին, երբեք լուրջ հայտ չի կարող ներկայացնել՝ համամարդկային արմաքներ ստեղծելու համար:

Մենք շատ հաճախ շփորում ենք ժամանակակիցը ժամանակավորի հետ: Պետք է հավատարիմ մնալ սեփական ազգային արմատներին, և ամեն մի դժվարություն բավական հեշտ հաղթահարելի կլինի: Նա, ով գիտե, թե որտեղից է գալիս, գիտե, թե ուր է գնում:

**Դասմիկ Գուլակյան  
Օգոստոս, 2004**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՀՆԱԳՈՒՅՆ ԲՆՈՐԻՐԱՆ

Կահագն Խորայելյան  
Տեխնիկական գիտությունների դոկտոր



Արգիշտիկինի ջրամբարի սխեմատիկ կտրվածքը

**Հ**այկական լեռնաշխարհը կամ բարձրավանդակը հընագույն ժամանակներից համարվել է շինարարական բարձր արվեստի մի ուրույն բնակավայր, որտեղ գոյություն են ունեցել (մասամբ էլ պահպանվել են) բազմաթիվ մեծ ու փոքր շինարարական կառույցներ:

Հայաստանի հուշարձաններից շատերը հաղթահարել են ժամանակի ու տարերի փորձությունները և մեզ են հասել տարբեր աստիճանի պահպանվածությամբ: Դա պայմանավորված է շինանյութի ընտրությամբ և տեղանքի երկրաբանական առանձնահատկությունների խոր իմացությամբ:

Դրանք տարբեր ժամանակաշրջանների պատմաճարտարապետական, ինժեներական, հիդրոտեխնիկական և այլ տիպի կառույցներ են, կարելի է ասել՝ մեր ազգային պարծանքն ու հպարտությունը, որոնք միաժամանակ համանարդկային քաղաքակրթության առաջընթացի ու զարգացման հենակետային արժեքներ են:

Իսկ ինչո՞վ է պայմանավորված այս երևույթը: Հայկական լեռնաշխարհի առանձնահատկություններից մեկը նրա “Քարաշխարհն” է: Սա մի արտակրոպ հարուստ, բազմածև աշխարհ է պայմանավորված երկրաբանական բարդ և տարաբնույթ երևույթ-

ներով: Խորանուխ չինելով տարածքի երկրաբանական զարգացման պատմության մեջ՝ ասենք, որ այս “Քարաշխարհում” ներկայացված են երկրաբանական բոլոր հասակների տարաբնույթ ապարները: Առավել թարմ և լիարժեք են պահպանվել չորրորդական հասակի և նորագույն հրաբխային գոյացումները: Քարերի աշխարհն անհիշելի ժամանակներից շրջապատել է մարդուն և դարձել նրա հավատարիմ, անմռունչ բարեկամը: Հայկական լեռնաշխարհի տեղաբնիկներն իրենց «աչքերը բաց են արել» այս աշխարհում: Մարդը քարանձավը դարձել է իր առաջին կացարնը, իր կուռքերն ստեղծել է քարից, ժայռապատկերների տեսքով քարին և ապավինել իր հույզերը, զգացմունքները, հաշվարկները: Քարե գործիքով է հայքայթել հացն իր հանապազօրյա, քարե զենքով է պաշտպանվել թշնամուց կամ հարձակվել նրա վրա: Այս ամենը հրաշքով պահպանվել են ներկայիս ՀՀ տարածքում:

Այս առումով ևս Հայաստանը Մերձավոր Արևելքի տարածքի քաղաքակրթության առաջընթացում կատարել է իր դերը:

Ի թիվս հրաբխածին ապարների բազալտի, խարամի, տուֆի, պենզայի, պեղլիտի և այլնի շարքում իր առանձնահատուկ տեղն ունի օբսի-

դիանը՝ հրաբխածին ապակին: Ինչպես փաստում են շատ գիտնականներ՝ քաղաքակրթությունն սկիզբ է առել և զարգացել այն տարածքներում, որտեղ եղել են կայծքար և օրսիդիան:

Չարմանահրաշ այս ապարը, որ Միջերկրածովյան ավազանին հայտընի դարձավ օբսիդիան անվանք, Հայաստանում ուներ իր «անհատական» անվանումը՝ վանակատ և բավական լայն տարածում ունի: Հավանաբար շատերը գիտեն ՀՀ-ում Գեղամա Լեռների, Հատիսի, Գութանսարի, Արտեմիի, Սիսիանի, Ծաղկունյացի, Նուշնուսի և այլ վայրերի բազմագույն, արտակարգ երանգներով օբսիդիանների տարատեսակների մասին: Ամերիկյան գիտնականները, ովքեր հետազոտել են մ.թ.ա. դեռևս X հազարամյակում միջցեղային կամ միջազգային կապերը կամ «կողունիկացիաները», ապացուել են, որ օրսիդիանը Հայաստանից արտահանվել է Պարսիկ Ծոց, արևմտյան Անատոլիա և այլուր (Dixon J & others. Obsidian and the origins of trade. Scientific American. March 1968): Նրանք հետազոտել են հնագիտական պեղածո օբսիդիանները և հնարավոր հանքավայրերը, որտեղից դրանք կարող էին ներկայել:

Ցրված և հազվագյուտ տարերի սպեկտրասկոպիական հետազոտությունների տվյալները ցույց են տվել, որ ամենից շատ այն տարպել է Հայաստանից՝ Վանա լճին մերձակա նեմրութ սարից, քիչ ավելի պակաս քանակությամբ: Ուրմիա լճի մերձակայքից:

Այսինքն՝ ժամանակակից լեզվով ասած՝ «բարտերը» գոյություն ուներ մ.թ.ա. X հազարամյակից: Համենայն դեպքու այդ ժամանակներից օբսիդիանը արտահանվել է Հայաստանից (օբսիդիանի՝ բնության մեջ մասնակիորեն փրփած տարբերակը՝ պեղլիտը, այսօր նույնական ՀՀ-ից արտա-

հանվում է: Ի դեպ, մենք դրանցից մշակել ենք բազմանուն և թանկարժեք տարրեր նշանակության տեխնոգեն նյութերի արտադրության բազմաթիվ տեխնոլոգիաներ և կարող ենք արտահանել համապատասխան գներով):

Ինչո՞ւ են մեր հուշարձաններն այսքան եզակի և երկարակյաց:

«Քարաշխարհում» ապրող մարդը դարեր շարունակ պրատելով կարողացել է ընթառնել բնությունը, նրա էլերյունը, առանձնահատկությունները: Դայլական լեռնաշխարհին բնորոշ են խիստ ցանքաքային բնակիմայական պայմանները, բարձունքների նշերի գգալի տատանումները, այսինքն՝ պայմանները, որոնք մարդուն երկնքից «մանանա» չեն հրամցնում: Բավարար կենսապայմաններ ապահովելու համար պահանջվում էր մտքի և մկանների քրտնաջան աշխատանք: Այս ամենն արտահայտվել է նաև տարրեր կառուցյան տեսքով: Բերենք հիդրոտեխնիկական կառուցյան մեկի՝ Մենուայի ջրանցքի (մ.թ.ա. I հազարամյակ) օրինակը: Ըստ Մովսես Խորենացու՝ «ջրանցքի ափերն այնքան ողորկ են, որ թվում եր, թե վրան ճարպ է քսված: Այդ պատերն այնքան ամուր են, որ պարստիկի քար անգամ անհնար էր պոկել»: Այն կառուցվել է կրաշաղախով (կրի գյուտն արդեն հայտնի էր Հայաստանում): Որպես լցանութ՝ օգտագործվել են հրաբխածին ապարներից ստացված պայմանը: Միայն մի քանի դար անց Միջերկրածովային ավազանում ստացան կիրը: Էտրուսկները նույնիսկ մարմարյա արձաններն են օգտագործում կիր ստանալու համար: Հետագայում կիր-ավազային խառնուրդը լայնորեն տարածվեց. միջազգային գիտական գրականության մեջ այն անվանվեց «ռոմանցեմենտ» և բացատրվում է Հռոմեական հզոր կայսրության գոյության փաստով: Նման մի պատմություն էլ կապված է Վանա կատվի անվանման հետ. աշխարհին այն հայտնի է որպես պարսկական կատու:

Հիդրոտեխնիկական մի այլ կառուցյան հայտանքը Արգիշտիխինիլիի պեղումների ժամանակ՝ 1973 թվականին: Դա մ.թ.ա. I հազարամյակի ջրամբար է, որը ցնցող տպավորություն թողեց նյութերի ընտրության և հակասելումիկ միջոցառումների իմաստով: Այն կառուցված էր բազալտի մի «լեզվակի» վրա: Պատերը շարված էին տուֆով, իսկ դրանց

արանքը լցված էր կավով: Բացի այն, որ մեր նախնիները բավական լավ ծանոթ էին տուֆի, և մասնավորապես հրաբեկորային տարատեսակների ֆիլտրող (զտող - խնք.) հատկություններին և հնուց ի վեր Արարատյան դաշտում դրանցից պատրաստված «ձագարներով» արտեզյան ջրերը մաքրում էին խնելու ջուր ստանալու համար, նրանք ոչ պակաս ճանաչում էին նաև կավը:

Մեր կատարած ֆիզիկաքիմիական համալիր հետազոտությունները ցույց տվեցին, որ ջրամերժ էկրանում (տուֆերի արանքում) օգտագործվել է երկու տեսակի կավ՝ մոնտմորիլունիտային և կաոլինիտային՝ մոտավորապես 1.5:1 հարաբերությամբ:

Իսկ ինչո՞ւ էր պետք նման խառնուրդը: Դայտնի է, որ մոնտմորիլունիտային կավերի բյուրեղական եռաշերտ ցանցերը ջրահագեցման ժամանակ ուռչում են, իսկ կաոլինիտային խնբի կավերը զուրկ են նման հատկությունից: Կերպիններս այս խառնուրդում սահմանափակել են մոնտմորիլունիտային կավերի ուռումը՝ կանխելով ջրահագեցման և ջրագրկման հետևանքով կծկման երևույթները: Ուշագրավն այն է, որ ջրամբարի տարածքում կաոլինիտային կավեր չկան: Այսինքն՝ այն հասուն կավանականությամբ, Արարատի շրջանից: Եվս մեկ ապացույց, որ մեր նախնիները շատ մեծ նրբությամբ են ընտրել շինանյութերը: Կայուն և սահուն համակառուցվածքը (կոնսիստենցիա) լիովին ա-

պահովում էր էկրանի հիդրոֆիորությունը (ջրամերժություն - խնք.), իսկ սրա համար ջրի անհրաժեշտ քանակությունը ստացվում էր տուֆերի մազանորային ծակուտիներով: Ավելորդ ջուրը հեռանում էր պատի մյուս կողմից: Հետաքրքիր է նշել, որ ճիշտ նույն կաոլինիտ-մոնտմորիլունիտային խառնուրդ են նախընտրել 3000 տարի անց՝ Կամայի ջրամբարի ջրամերժ էկրանի համար:

Որպես հակասեյսմիկ միջոցառում բազալտի վրա ստեղծված էր կավային «բարձիկ»: Այսօր էլ այդ ջրամբարը կարող է ծառայել իր նը-

պատակին:

Ապերելով երկրաբանական առումով անհանգիստ երկրամասում մեր նախնիները հոգացել են բոլոր տեսակի կառուցյան սեյսմակայունությունն ապահովելու համար: Նման լուծում ունի, օրինակ, Գառնիի տաճարը: Այն կառուցված է բազալտի հրաշագեղ, սյունաձև անջատումներով ավարտվող «հրվանդանի» վրա: Տաճարը վերականգնելիս նրա հիմքում ի հայտ եկավ հրաբխային խարամի շերտ, որը տեղում չէր կարող առաջանալ, առավել և պահպանվել: Խարամը հատուկ բերվել և փորվել է կառուցյի տակ որպես միջանկյալ՝ բազալտի կոշտ հիմնատակից տաճարի կոշտությունն անջատող շերտ՝ կլանելու, թուլացնելու, մարելու, տարաբաշխելու համար սեյսմիկ հարվածների ազդեցությունները:

Սեյսմիկ ազդեցությունը մեղմելու նպատակով նման մեթոդ է կիրառվել նաև մեկ այլ եզակի կառուցյում՝ Տաքի համալիրում: Սա, ինչպես և Գառնին, տեղադրված է բազալտային հոսքի ծայրին: Շինության հիմքում կա նման «բարձիկ» կամ «ներքնակ», միայն թե՝ ավազից: Ավազի




A  
Փքած օրսիդիան, որն ստացվել է Երևանի քարի և սիլիկատների գիտահետազոտական ինստիտուտի լաբորատորիայում: Շեղինակ կահագն Խարայելյան:

պետրոգրաֆիական (ալկալային ալյումինասիլիկատային միացություններ), ֆիզիկաքիմիական նանրազնին ուսումնասիրությունները բացահայտեցին նրանց քվարց-պլագիոկլազային (մանրադիտակային ուսումնասիրությունների) կազմը, որը տեղում ոչ մի պարագայում չէր կարող առաջանալ: Այս փաստը խոսում է այն մասին, որ ավազը հատուկ է օգտագործվել. տեղադրված են եղել հիմնատակի և կառուցյի կոշտությունները միմյանցից մեկուսացնելու նպատակով:

Դատելով վերը բերված օրինակ-

ներից՝ կարելի է ենթադրել, որ նման միջոցառումներ հնարավոր են նաև այլ հուշարձաններում: Միաժամանակ վստահորեն կարելի է ասել, որ դրանք ներկայում օգտագործվող հակասեյամիկ «բարձիկների» նախատիպերն են:

Եթե այս համարեղ շինությունների օրինակներով համոզվում ենք, որ տասնյակ դարեր առաջ իրականացվել են հակասեյամիկ միջոցառումներ, որոնց հիմքում ընկած է եղել դինամիկ հարվածի թուլացման գաղափարը և կոչությունները միմյանցից մեկուսացվել են միջանկյալ այլ նյութերի տեղադրմամբ, մեկ այլ համարեղ կառուցում՝ Զվարթնոցի տաճարի դեպքում, հակասեյամիկ միջոցառումը կապված է եղել կառուցից զանգվածի նվազեցման հետ: Սա իրականացվել է կոռու կառուցվածքների վրա ընկնող ծանրության նվազեցմամբ, որի համար օգտագործվել



**Զվարթնոցում օգտագործված փրված օրսիդիանի կտորներ**



է այն ժամանակվա համար անսպասելի, անհավատալի, սակայն Հայաստանում հայտնի շատ պարզ եղանակ: Այստեղ օգտագործվել է արհեստականորեն փրված օրսիդիանը: Մեր մանրակրկիտ ուսումնասիրություններն ապացուցեցին այդ փաստը: Միաժամանակ պարզեցինք նաև այն հանքավայրը, որտեղից բերվել էր ապարը (օրսիդիան): Իսկ Քասախի Բազիլիկայի (IVդ.) վերականգնումից առաջ հայտնաբերեցինք, որ շաղախի մեջ, որպես կապակցման կարգավորիչ, օգտագործված է եղել գիպսը: Գիպսի այս հատկությունը եվրոպայում, Ռուսաստանում և այլուր հայտնաբերեցին X-XI դդ.:

Այսօր, եթե ձեռքդ են վերցնում, շոշափում մ.թ.ա. III-II հազարամյակներով թվագրվող պեղածու ապակյա ուլունքները, ագարից, այլևայլ քարերից ու ոսկուց պատրաստված զարդերը, աչքերիդ չեն հավատում: Կատարելության ի՞նչ նրություն և

վարպետություն: Բնականարար, այս ամենը չէր կարող մնալ միայն Հայաստանում: Ինչպես օրսիդիանն ու ցորենը, այնպես էլ տեխնոլոգիաները, հմտություններն ու իմաստները, այդ թվում լեզուն, արտահանվել են, նպաստել հարևան ժողովուրդների, մը-

շակույթների զարգացմանը: Հայաստանն այս առումով, իհարկե, ինչպես հանգամանորեն հիմնավորել է անգլիացի գիտնական Լինչը, եղել է քաղաքակրթության բնօրրաններից մեկը: Ի լրում ասվածի նշենք, որ մեր Լեռնաշխարհից արտահանվել է օրսիդիանից ոչ պակաս կարևոր մեկ այլ բան՝ «վայրի ցորենը»: Նիկուլայ Վավիլովի հետազոտությունները ցոյց են տվել, որ այն բավական լայն տարածում է ունեցել Հայաստանում՝ ծովի մակերևույթից 800-1000 մ բարձր տարածքներում, անգամ՝ Երևանի շրջակայքում: Այնուամենայնիվ զարմանալի է, որ Զեյմս Մելարտը իր «Մերձավոր արևելքի հնագույնք աղ ք ա կ ր թ ո ւ թ յ ո ւ ն ն ե ր ը » («Ածական ձեռնունշան անգամ անգամ անգամ») գրքում «Հայկական Լեռնաշխարհ» արտահայտությունը գրել է միայն մեկ անգամ: Նոյսնը՝ Թամազ Գամկրելիձեն և Վյաչեսլավ Իվանովը՝ իրենց համահեղինակած «Հնդեվորպական լեզուն և հնդեվորպական լեզու» գրքում: Բայց Արդքեզան, Քրոտսան և քոչվոր այլ ցեղերի ու ցեղախմբերի գրաված տարածքներ նշված են բազմից: Իսկ մենք՝ հատկապես պատմաբան-հնագետ-լեզվաբաններս, չենք արձագանքել այս կարգի անբարդյականություններին...

Քարեթախտաբար ի հայտ եկան բնական գիտությունների մասնագետներ, ովքեր անդրադառն հատկապես այս հարցերին: Վերջիններիս առավելություն այն է, որ նրանք կաշկանդված չեն այլազգի հեղինակությունների աղավաղումներով: Այսպես՝ դեռևս 1970-ական թվականներին, Մեծամորի պեղումներից



**Գիպսի բյուրեղները՝ Քասախի բազիլիկայի շաղախմներում (Եվկողոնային մանրադիտակով)**

հետո, երկրաբան Սուրեն Այվազյանը բավական լրջորեն անդրադառն այս իմանախմնողներին:

Նշենք նաև, որ Հայկական լեռնաշխարհի բնիկները՝ հայերը, միայն «ոտքի տակ» չեն նայում: Նրանք հավասարապես ուսումնասիրում են երկինքն ու տիեզերը: Այս առիվ դիպուկ է նկատել ակադեմիկոս Պարիս Շերունին. «Անանիա Շիրակացին նկարագրեց, մեկնաբանեց Արևը, նրա համաստեղությունները՝ VII դարում, իսկ դրանից 1000 տարի անց Եվրոպացիներն իրենց այրելով կրկնեցին նրա ասածները...»:

Պարիս Շերունու ուսումնասիրած աստղադիտարանները նույնպես պատրաստված էին քարից: Իսկ որպես սոսնյակ (որոնք չեն պահպանվել), հնարավոր է դարձյալ օգտագործված լինի օրսիդիանը: Մենք ունենք դրանց թափանցիկ, տոպազանան տարատեսակները ևս: Իսկ գրեթի և լեզվի մասին համոզիչ է երկրաբան Վիլեն Սաֆարյանի ուսումնասիրությունը: «Շումերական» հիերոգիֆները բավական վատահությամբ նա կարդում է հայերեն, իսկ դյակոնվաները՝ «պանդիրերեն»: Նման հետևության է եկել նաև մեկ այլ մասնագետ, այս անգամ՝ տեսական մեխանիկայի բնագավառից՝ Էդմոն Խուրշույյանը: Եզրահանգումները, անկախ միմյանցից, նույն են, ինչ Վիլեն Սաֆարյանինը և Սուրեն Այվազյանը:

Այս թեմաներով կարելի է խոսել անվերջ: Սակայն ժամանակն է. որ մեր մասնագետներն աշխատեն թև թևի տված, ստեղծեն մի հզոր խումբ և աշխարհին ներկայացնեն մեր նվազումներն ու նրանց դերը համամարդկային առաջընթացի գործում:



Եզրուն բոլոր ժամանակներում եղել և մնում է ազգի գլխավոր ցուցիչը և անսխալական արտահայտիչը: «Ներկայիս ժամանակում, - գրել է Մեսրոպ Թաղիայյանը, - մեր ազգության ապացույց և նշանն միայն մեր լեզուն է, եթե այն և միջիցն բառնանք, ել հայ չենք»:

Նույնն է վկայում նաև մեր մեջ լուսավորիչ խաչատուր Աբրվյանը. «Մեկ ազգի պահողը, իրար հետ միացնողը լեզուն առ հավատը: Լեզուդ փոխիր, հավատդ ուրացիր, ել ընչո՞վ կարես ասիլ, թե որ ազգիցն ես»:

## ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԻՆՔՍՈՒՍՈՒՅՑ

Այսօր, թերևս, ոչ մեկի համար գաղտնիք չէ, որ ինչպես Մայր հայրենիքում, այնպես էլ սփյուռքում բավական մեծարիկ են մեր այն հայրենակիցները, ովքեր ճակատագրի բերմանք անհաղորդ են մնացել իրենց նախնյաց լեզվին, որը ոչ միայն ոգի է, այլև ազգային ոգու և փորձի փոխանցման միջոց: Հայկական տարերթից կտրված այդ մարդկանց համար, որքան էլ ցավալի է և տարօհնակ, հայերենը օտար լեզու է, ինչպես մեզ համար՝ անգլերենը, ֆրանսերենը, ռուսերենը և մյուս լեզուները: Հայերեն չիմանալը հայի մեղքը չէ, այլ դժբախտությունը: Ուստի կարծում ենք՝ մեղադրելուց ավելի կարևոր և մարդասիրական կիխի այն, որ օգնենք մեր քույրերին ու եղբայրներին, գոնե՝ ցանկացողներին, վերադառնալ մայր ժողովորի գիրկը:

Մյուս կողմից՝ Հայաստանի Հանրապետության անկախության հրչակումից հետո, երբ մեր երկիրը ներգրավվել է համաշխարհային գործընթացի մեջ, անդամ դարձել միջազգային մի շարք կառույցների, գնալով մեծանում է հետաքրքրությունը հայերին ու մեր երկիր նկատմամբ, և շատ օտարերկրացիներ և ցանկանում են հայերեն սովորել, մեզ հետ հաղորդակցվել մեր լեզվի:

Հայերենը որպես օտար լեզու ուսուցանելու բնագավառում եղած բացը լրացնելուն է կոչված հայոց լեզվի մեր ելեկտրոնային նոր հնքնուսույցը (հեղինակակից՝ Գրիգոր Վահանյան): Այն ստեղծվել է 1998-2003թթ. «Որոնում-Հայկնետ» հիմնադրամում (այժմ՝ «Հայկնետ» ուսումնագիտական հիմնադրամ)՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության ֆինանսական աջակցությամբ:

Սա լազերային սկավառակի վրա գրանցված եռալեզու (հայերեն, անգլերեն և ռուսերեն) էլեկտրոնային դասագիրք է, որի հայերեն տեքստերը նաև հնչում են: Այս հնքնուսույցով անգլախոս կամ ռուսախոս յուրաքանչյուր ոք, հայերեն չիմացող հայ կամ օտարերկրացի, կարող է կարծ ժամանակամիջոցում յուրացնել մոտ 2000 բառ և տիրապետել լեզվական այնպիսի հմտությունների, որոնք նրան հնարավորություն կտան միջին մակարդակով ազատ հաղորդակցվել հայկական միջավայրում:

Լեզվի ուսուցման մեր մեթոդի հիմքում խաղն է՝ որպես դարերով փորձված միջոց: Այսինքն՝ ուսուցման նպատակը բարենված է սովորողից: Դիտողական և խոսքային միջոցների օգնությամբ ստեղծվում է բնականին մոտ միջավայրի պատկեր, և սովորողին թվում է, թե ինքը ոչ թե լեզու է սովորում, ոչ թե բերականական հասկացություն կամ խոսքային միավոր է յուրացնում, այլ առօրյա կյանքում հանդիպող խնդիր է լուծում կամ առաջադրանք կատարում: Այստեղ չկան բերականական բացատրություններ, բերականությունն ուսուցանվում է գործնական վարժություններով, որոնք, բնույթով հաղորդակցական լինելով, միաժամանակ թեմատիկ և իրադրական ուղղվածություն ունեն:

Ներկա հնքնուսույցի կառուցվածքը պարզ է: Այն բաղկացած է 34 թեմատիկ դասերից, որոնցից առաջին 9-ը կազմված են միայն բանավոր վարժություններից. նկատի ենք ունեցել այն հանգանանքը, որ մարդը նախ խուել է սովորում, ապա՝ կարդալ ու գրել: X-XII դասերը նվիրված են գրուստումանը, մնացածները՝ գիտելիքի խորացմանը:

ամրակայմանը: Սկսած XIII դասից՝ երկխոսությունները ծառայում են նաև որպես ընթերցանության նյութ: Ընթերցանության և գրավոր վարժությունների ներգրավումն օգնում է բանավոր ճանապարհով հաղորդված լեզվական նյութի և կառուցվածքի յուրացմանն ու ամրապնդմանը:

Յուրաքանչյուղ դասն իր հերթին բաղկացած է երեք մասից: Առաջին մասում տրվում է լեզվաբերականական այն նյութը, որի ուսուցումը տվյալ դասի նպատակն է: Երկրորդ մասում, որը վերնագրել ենք «Զրուցարան», բերվում են այդ նյութն ընդգրկող կամ պարունակող երկխոսություններ, երրորդ մասում բանավոր և գրավոր վարժություններ: Վերջում կա գիտելիքների սոուզման հարյուր բալանց մի հարցարան, որի միջոցով ստվորողը, ընտրություն կատարելով գոյս՝ ճիշտ և սխալ ձևերի միջև, կարող է ինքնուրույն որոշել հայերենի հնացության իր մակարդակը՝ լեզու սովորելու այս նախնական փուլում:

Սովորողի գործը հեշտացնելու համար, որ անընդհատ «չվազի» բառարանի հետևից, հայերենի բոլոր տեքստերը թարգմանել ենք անգլերեն և ռուսերեն. բավական է սլաքը դնել ԱՌ-ի կամ ՌԴ-ի դրոշի վրա, և կը արանին անմիջապես հայտնվում է նոյն տեքստի անգլերեն կամ ռուսերեն թարգմանությունը:

Իսկ ինչ վերաբերում է տեսալսողական նյութերի հարցստությանը, որա ապացույցն ինքնուսույցում գետեղված ավելի քան հազար նկարներն ու պատկերները և տեքստերի ձայնագրություններն են:

Նորագոյն տեխնոլոգիաներն, իրոք, իրաշրջներ են գործում, և մեր հնքնուսույցի էլեկտրոնային տարրերակի հնարավորությունները, չենք երկնչում ասել, անսահմանափակ են: Նախ՝ սովորողը կարող է համակարգչի վահանակի կոճակը սեղմելով իր ցանկացածի չափով լսել և կրկնել իր ուզած բառը, բառակապակցությունը նախադասությունը, երկխոսությունը կամ այլ տեքստ, կարող է կրկին ու կրկին վերադառնալ նախորդ էջին կամ դասին, նորից աշխատել այդ նյութի վրա, իսկ եթե օգնության կարիք է գտում, կարող է կանչել «Մեթոդական ուղեցույցը»:

Ի տարբերություն իրապարակում եղած հայերենի մյուս ինքնուսույցների՝ սա որևէ ծրագրի թարգմանությունը կամ հայացումը չէ, այլ մեր ստեղծածը, և շարունակական բնույթը ունի: Իսկ դա նշանակում է, որ այն կարող է հարցստացվել նորանոր նյութերով, թեմաներով ու դասերով: Այսպես՝ նպատակ ունենք նոյն տեքստը փոխադրել նաև արևմտահայերենի, թարգմանել ֆրանսերեն, գերմաներեն, իտալերեն և խապաներեն լեզուներով, իհարկե, համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:

Ինքնուսույցը, որը հասցեագրված է թե՝ մեծահասակներին, թե՝ փոքրահասակներին, լայն հեռանկարներ է բացում նաև հեռահաղորդակցական ուսուցման համար, որը համակարգչի միջոցով կկապի աշխարհի տարբեր ժագերում ապրող հայերին իրար և Մայր հայրենիքի հետ:

**Սամվել Խսկանդարյան  
Բանասիրական գիտությունների թեկնածու**

# ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ, ԹԵՇ ԹՐՔԱՑՈՒՄ...

## Անդրադարձ

Պատմական գիտությունների թեկնածու Գևորգ Յազըճյանի «Ազգային պատմության դարաբաղացո՞ւմ, թե՞ թքացում...» հոդվածով «Ծրջադարձն» անդրադարձել է 1999թ. Մոսկվայի «Այրո Խ» հրատարակչության՝ «Ֆրիդրիխ Նաումանի հիմնադրամի» հովանավորությամբ լույս տեսած «Ազգային պատմություններ» խորհրդային և հետխորհրդային պետություններում» խորագրով ռուսերեն ժողովածուում ԵՊՀ պատմության ֆակուլտետի նախակին դեկան, այժմ՝ հայոց պատմության ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Բարեկեն Հարությունյանի և ԶԼՍ-ների կովկասյան ինստիտուտի (Երևան) փոխտնօրեն Ալեքսանդր Խականդարյանի համահեղինակած «Հայաստան. ազգային պատմության «Դարաբաղացում»» հոդվածին («Ծրջադարձ», 2004, թիվ 2, թիվ 3):

Ի պատասխան աղմկահարուց այս հրապարակման անդրադարձների՝ «Գոլոս Արմենի» հուլիսի 29-ի՝ «Պրոֆեսոր Բարեկեն Հարությունյանը հերքում է» հոդվածում ներկայացրել է պատմաբանի մերժումը. ժամանակին ինքը այլ հոդված է հանձնել Ա. Խականդարյանին՝ այլ խորագրով, սակայն վերջինս փոխել է տեքստը՝ առանց իր հետ համաձայնեցնելու: Նաև պարզաբանել է, որ «Գոլոս Արմենիում» Ա. Գրիգորյանի սույն թվականի ապրիլի 4-ի հրապարակումից հետո ինքը պահանջել է Խականդարյանից բացատրություններ տալ մամուլում և ստացել «սովորաբար ես նման հրապարակումներին չեմ պատասխանում. դա համարում եմ արդարացում» պատասխանը: Պրոֆեսորը չի թաքցնում իր զայրույթը կատարվածի առնչությանը և գրել է, որ նտադրություն ունի ամենամոտ ապագայում «առանց փոփոխությունների» հրատարակել իր այն հոդվածը, որն «ինքը հանձնել է Ա. Խականդարյանին» և «Վերջակետ դնել այս պատմությանը»:

# ԿԱՐԵՎՈՐ Ե ԹՎՈՒՄ Բաց նամակ պրոֆեսոր Բարեկեն Հարությունյանին

Հարգելի պրոֆեսոր

Քաջ գիտակցելով, որ պատմությունը, այդ թվում՝ այդ տիրահոչակ հոդվածի հետ կապված Ձեր պատմությունը, բացառում է ստորադասական եղանակը, այնուամենայնիվ կփորձեմ դատողություններ անել այն նախին, թե ինչ պետք է աներ Ձեր փոխարեն ԵՊՀ պրոֆեսորը:

Եվ այսպես՝ 1999 (ՏԻԿ!) թվականին անաշառության և գիտականության հավակնող Ֆրիդրիխ Նաումանի հիմնադրամի հրատարակությունում լույս է տեսնում հոդված, որի բովանդակության հետ, ինչպես գրել է «Գոլոս Արմենի» թերթը 2004թ. հուլիսի 29-ի համարում, Դուք «ոչ մի առնչություն չունեք»: Ահուելի մատենագրության հանդերձավորված այդ հոդվածում, որը, բնականաբար, ներկայացված է «Գաղափարների» կշիռն ավելացնելու համար, խեղարյուրել է հայ ժողովրդի պատմական ընթրունումը (խոսվում է, օրինակ, «գերաճած էրնուկենտրոնության» մասին), կասկածի տակ է առնվում արցախյան ազգային-ազատագրական պայքարի արդարացիությունն ու օրինականությունը և այլն, և, որ ամենազիստավորն է, հոդվածի հեղինակներից մեկը Դուք եք: Ընդ որում, «Տեղեկություններ հեղինակի մասին» բաժնում թվարկված են Ձեր գերարտոնությունները՝ պրոֆեսոր, ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան, բնականաբար, իհարկե, անամոր հակագիտական գրպարտության հեղինակությունն ապահովելու նպատակով: Խրականում Դուք գրել եք. «Եյութք հանձնել են այն ժամանակ մոսկվանակ Ալեքսանդր Խականդարյանին՝ «Պատմական գիտությունը Հայաստանում 1988-1996թ.» վերտառությամբ և բոլորովին այլ բովանդակություն

ուներ: Ա. Խականդարյանը, առանց ինձ հետ համաձայնեցնելու, տեքստը փոխել և հրապարակել է իիշյալ ժողովածուում: Այդ մասին ինացա ժողովածուի լույս տեսնելուց հետո» (մեկ անգամ ևս հիշեցնեմ, որ առաջին հրապարակումը 1999 թվականին էր):

Ինչպիսի՞ն պետք է լիներ Ձեր վերաբերմունքը: Սկզբում, անկասկած, տեղեկացնել հայ հասարականությանը, որ Ձեզ նողակալի ծևով դավել են: Դա պետք է անել դեռ այն ժամանակ՝ 1999-2000թթ. և ոչ իհնա, եթե Ձեր բացատրությունները պայմանավորված էին, եթե չասենք՝ անհրաժեշտ էին, որպես արդարացի քննադատություն՝ այդ հոդվածի առնչությանը: Այնուհետև Դուք պետք է ժողովածուի հրատարակիչներից պահանջեիք հոդվածից պաշտոնապես հետո կոչել Ձեր ստորագրությունը և հիմնադրամի հրատարակություններից մեկում (իսկ դրանք լույս են տեսնում բավական կանոնավոր) արտահայտել Ձեր խական տեսակետը՝ հոդվածում արձարձված հիմնահարցի վերաբերյալ: Այդ կերպ Դուք միանգամից «Երկու նապատակ կսպանեիք»: Մի կողմից՝ ոչ մեկի թույլ չէիք տա, ինչպես գրել եք, Ձեր դեմ ծավալել «սույն հալա-

ПРЕДСТАВЛЯЕТСЯ  
ВАЖНЫМ

Открытое письмо  
профессору Б. Арутюняну

Уважаемый профессор!  
Прекрасно понимая, что история, в том числе и Ваша история с этой злосчастной статьей, не терпит сослагательного наклонения, попытаемся тем не менее порассуждать на тему о том, что должны были делать на Вашем месте профессор Ереванского государственного университета.


ИТАК, в 1999 (ՏԻԿ!) ГОДУ в претендующем на беспристрастность и научность издании фонда Фридриха Наумана выходит статья к содержанию которой, как Вы пишете в «Голосе Армении» от 29.07.04,

# Նոր հրատարակություններ

■ Որբերտ Ավագյան, «Սևանա լճի իրավական պաշտպանությունը», ժողովածու: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 2003, 777 էջ, չափսը՝ 25 սմ x 17 սմ:

Գիտական, գործնական և ճանաչողական նշանակություն ունեցող այս ժողովածուն ընդգրկում է անվանի գիտնականի իրավագիտության և հասարակական կյանքի առաջնահերթ իմանահարցերին նվիրված գիտական հրապարակություններին ու հրապարակախոսական նյութերը: Բաղկացած է «Գիտական հրապարակություն», «Հրախոսականներ», «Տերևայակացված նյութերն ընդգրկում են շուրջ 40-ամյա ժամանակաշրջան:

Հրատարակվել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի գիտխորհրդի որոշմամբ:



■ Արտեմ Օհանջանյան, «1915 թվական. անհերքելի վկայություններ (Ավագանության վավերագրերը Հայոց ցեղասպանության մասին)» (անգլերեն): Հայոց ցեղասպանության բանգարան-ինստիտուտի հրատարակչություն, Երևան, 2004, 253 էջ, չափսը՝ 23,5 սմ x 17 սմ:

Մենագրությունը պատրաստվել է Վիեննայի պետական արխիվների վավերագրերի հիման վրա: Բնագիրը (գերմաներեն) լուս է տեսել 1995թ.: Այնուհետև բարգանվել է հայերեն և պարսկերեն:

Բոլոր հրատարակությունները կարելի է ձեռք բերել Հայոց ցեղասպանության բանգարան-ինստիտուտի գրախանություն: Ներ.: 39-09-81:


■ «Հայոց ցեղասպանության դատապարտումը Մեծ Բրիտանիայի խորհրդարանում (1915-1918թ.)», փաստաթերթի ժողովածու: Երևան, «Նահապետ» հրատարակչություն, 2004, 94 էջ (Ա-5):

Կազմել և խմբագրել է պատմական գիտությունների դոկտոր Լավրենտի Բարսեղյանը:

Գրքի հրատարակությունը երաշխավորել է ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության բանգարան-ինստիտուտի գիտխորհրդը՝ «Հայոց ցեղասպանությունը և միջազգային հանրությունը» մատենաշարով (թիվ 5): Թարգմանել է Հասմիկ Հայրապետյանը:


Գիրքը կարելի է ձեռք բերել Հայոց ցեղասպանության բանգարան-ինստիտուտի գրախանություն: Զանգահարել 39-09-81 հեռախոսահամարով:

■ Վահագն Տատրյան, «Ակնարկներ Հայկական ցեղասպանության մասին» (դասախոսությին Հայ Կեդրոնի սրահին մէջ, 14 նոյեմբեր, 2003, Պուէնո Այրէս): Երևան, «Նահապետ» հրատարակչություն, 2004, 48 էջ (Ա-5):



«Զորյան» հաստատության (Կանադա) Ցեղասպանության ուսումնամուրության բաժնի տնօրեն, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ, ցեղասպանագետ, սոցիոլոգ, դոկտոր, պրոֆեսոր Վահագն Տատրյանը դասախոսության ընթացքում առանձնացրել է չորս առանցքային հարցեր՝ ա) Հայոց ցեղասպանության սոցիալական և պատմական ազդակները, բ) Հայոց ցեղասպանության կազմակերպումն ու իրագործումը, գ) թուրքական ուրացումները, դ) Հայոց ցեղասպանության ժամանակաշրջան:

Հրատարակության է երաշխավորել ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության բանգարան-ինստիտուտը:




■ Ոոպեր Յատտէճեան, «Բնակարներ» (Յուշատետր-44), ժողովածու: Ստամբուլ, 2004, 383 էջ, չափսը՝ 18,5 սմ x 13 սմ:

Անփոփված են պոլսահայ արձակագիր, հրապարակախոս, լրագրող հեղինակի՝ բնության գեղեցկություններին նվիրված 128 հոդվածներ, որոնք «Մարմարայի» մեջ հրատարակվել են 2001թ. փետրվար-օգոստոս և 2001թ. հոկտեմբեր - 2003թ. փետրվար ժամանակահատվածներում:

■ Գրիգոր Չօհրապ, «Երկերի լիակատար ժողովածու» (չորս հատորով), հատոր Դ: Երևան, Գրականության և արվեստի բանգարանի հրատարակչություն, 2003, 656 էջ (Ա-5):

Ընդգրկում է մեծ գրողի նամակները, ընծայագրերը և օրագրությունները: Նամակների մեծ մասը, իսկ ընծայագրերը՝ ամբողջությամբ, տպագրվել են առաջին անգամ: Ֆրանսերեն նամակները բարգանել է Արուսյակ Բոյաջյանը, թուրքերեն՝ Ավետիս Փափազյանը: Խմբագիր՝ Գրիգոր Չակորյան:

Հատորն ունի առաջաբան, ծանոթագրություններ և բառարաններ: Գիրքը տպագրվել է ԱԱՍ Հայաստանյաց Արաքելական Եկեղեցու Արևելյան թեմի հայոց առաջնորդարանի հոգածությամբ՝ Դոլորես Լիպմեն-Չօհրապի կտակի հիման վրա:



■ «Մոռ Լևոնի պատուիաններում շմարի լուսար», ժողովածու (ռուս.): Ուսու-հայկական համալսարանի հրատարակչություն, Երևան, 2004, 304 էջ (Ա-5):

Գիրքը նվիրված է Ուսու-հայկական (Սլավոնական) պետական համալսարանի հիմնադիր և առաջին ռեկտոր, ակադեմիկոս Լևոն Մկրտչյանի հիշատակին:



Ժողովածուն բաղկացած է Երկու մասից: Առաջին մասում ամփոփված են հուշեր՝ գիտնականի մասին, Երկրորդում՝ նրա ծննդյան 70-ամյակի առթիվ 2003թ. իր հիմնարդած համալսարանում տեղի ունեցած գիտաժողովի գեկուցումները:

Կազմել և նախարանը գրել է գրքի խմբագիր Մագդա Զանփոլայյանը:

Ժողովածուն կարելի է ձեռք բերել Ռուս-հայկական համալսարանի հրատարակչությունում: Հեռ.՝ 27-70-52:



■ Արտյուշ Խանջյան, «Մոռագված և անհայտ էջեր Վահան Տերյանի կյանքից»: «Վարք» հրատարակչություն, Երևան, 2003, 32 էջ (A-5):

